

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական

հաշվետվություններ

Պատրաստված ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներին համապատասխան

*2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա
համար*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	3
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն Խմբի վերաբերյալ	5
2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմքերը.....	5
2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները.....	5
2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր	6
2.4 Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ.....	21
3. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ.....	21
4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ.....	23
5. Հասույթ	25
6. Վաճառքի ինքնարժեք	26
7. Այլ եկամուտներ	26
8. Վարչական ծախսեր	26
9. Այլ ծախսեր.....	27
10. Ֆինանսական ծախսեր.....	27
11. Հարկում	27
12. Հանքարդյունաբերական գույք.....	28
13. Հիմնական միջոցներ	29
14. Պաշարներ.....	29
15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30
16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	30
17. Կանխավճարված ֆինանսական ծախսեր.....	30
18. Կանոնադրական կապիտալ և պահուստներ.....	31
19. Վարկեր և փոխառություններ	32
20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	33
21. Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ	33
22. Կապակցված կողմեր.....	34
23. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ	36
24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը	37
25. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր.....	41

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի բաժնետերերին և ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության և իր դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Նումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ և Կանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝



Ռուսլան Խոռոշվիլի

Գլխավոր տնօրեն՝ Ն. Սարգսյան՝ ի դեմս
լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2013թ.
հուլիսի 31-ին տրված լիազորագրի հիման վրա)



Էրիկ Հայրապետյան

15 օգոստոսի 2013թ.

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

	<i>Ման.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Հասույթ	5	43,353,675	42,721,136
Վաճառքի ինքնարժեք	6	(35,068,916)	(35,973,840)
Համախառն շահույթ		8,284,759	6,747,296
Այլ եկամուտներ	7	172,392	410,931
Վարչական ծախսեր	8	(1,341,756)	(1,314,842)
Իրացման ծախսեր		(280,061)	(289,496)
Այլ ծախսեր	9	(314,457)	(164,153)
Գործառնական շահույթ		6,520,877	5,389,736
Ֆինանսական եկամուտ		3,076	2,840
Ֆինանսական ծախսեր	10	(1,035,887)	(874,161)
Շահույթ նախքան շահութահարկը		5,488,066	4,518,415
Շահութահարկի գծով ծախս	11	(1,277,448)	(842,213)
Հաշվետու տարվա շահույթ		4,210,618	3,676,202
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Հաշվետու տարվա համապարփակ եկամուտ, շահութահարկից հետո		4,210,618	3,676,202
Վերագրելի՝			
Մայր ընկերության սեփականատերերին		4,290,087	3,676,202
Զվերահսկվող բաժնեմասին		(79,469)	-
		4,210,618	3,676,202

Ստորագրված է և հաստատված է թողարկման «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի անունից՝

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

15 օգոստոսի 2013թ.



Գագիկ Արզումանյան

Համլետ Հարությունյան

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	<i>Ծան.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	60,048,700	27,997,862
Ոչ նյութական ակտիվներ		114,594	113,767
Հանքարդյունաբերական գույք	12	11,347,125	4,095,319
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		10,313,392	11,659,851
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ		5,798,640	3,298,663
Հետաձգված հարկային ակտիվներ	11	382,043	387,862
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		14,631	14,631
		88,019,125	47,567,955
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	6,842,446	3,371,749
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	4,653,443	5,778,667
Կանխավճարված ֆինանսական ծախսեր		1,555,001	3,203,151
Տրված փոխառություններ		62,665	59,599
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	3,309,152	758,944
		16,422,707	13,172,110
Ընդամենը ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ակտիվներ			
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	18	3,069,716	3,069,716
Զբաղիված շահույթ		16,952,679	12,662,592
Մայր ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		20,022,395	15,732,308
Զվերահսկվող բաժնեմաս		3,924,840	4,004,309
		23,947,235	19,736,617
Ընդամենը սեփական կապիտալ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	65,413,150	9,561,515
Պետական շնորհներ		70,160	71,684
Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ	21	228,488	–
Վճարման ենթակա ԱԱՀ		2,660,002	1,595,789
		68,371,800	11,228,988
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	10,267,747	27,604,242
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	1,199,096	1,543,090
Շահութահարկի գծով պարտավորություն		535,163	537,705
Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ	21	120,791	89,423
		12,122,797	29,774,460
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը պարտավորություններ			
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ			
		104,441,832	60,740,065

(հազար ՀՀ դրամ)

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Ծան.	<i>Ընդամենը</i>				
	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Զբաղիված շահույթ</i>	<i>մայր ընկերության սեփականա- տերերին վերագրելի սեփական կապիտալ</i>	<i>Չվերահսկվող բաժնեմասեր</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	3,069,716	9,941,678	13,011,394	-	13,011,394
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	3,676,202	3,676,202	-	3,676,202
Բաժնեմասնակցության փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում վերահսկողության կորստի	-	(955,288)	(955,288)	4,004,309	3,049,021
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,069,716	12,662,592	15,732,308	4,004,309	19,736,617
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	4,290,087	4,290,087	(79,469)	4,210,618
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,069,716	16,952,679	20,022,395	3,924,840	23,947,235

(հազար ՀՀ դրամ)

**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

	<i>Ծան.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Գործառնական գործունեություն			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ		43,704,467	43,584,291
Պետական բյուջեից ԱԱՀ հաշվանցման գծով ստացված դրամական միջոցներ		6,171,948	7,215,061
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ		(48,000,886)	(46,551,888)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(1,239,337)	(958,493)
Վճարված շահութահարկ*		(966,000)	(757,500)
Վճարված տոկոսներ		(2,588,397)	(781,265)
Այլ վճարված հարկեր		(781,344)	(741,369)
Դրամական հոսքեր (օգտագործված գործառնական գործունեության համար) / գործառնական գործունեությունից		(3,699,549)	1,008,837
Ներդրումային գործունեություն			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(31,941,636)	(19,190,470)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(5,000)	(5,254)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		769,924	36,480
Տրված փոխառություններ		-	(5,800)
Ստացված տոկոսներ		-	69
Դրամական հոսքեր օգտագործված ներդրումային գործունեության համար		(31,176,712)	(19,164,975)
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր վարկերից և փոխառություններից		84,621,691	62,877,351
Վարկերի և փոխառությունների գծով վճարներ		(47,240,883)	(44,631,059)
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		37,380,808	18,246,292
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ավելացում		2,504,547	90,154
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		45,661	(39,869)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ		758,944	708,659
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	16	3,309,152	758,944

* Խումբը հաշվանցել է պետական բյուջեից ստացման ենթակա ԱԱՀ-ն շահութահարկի գծով պարտավորությունների հետ 308,173 (2011: 125,623) գումարի չափով:

(հազար ՀՀ դրամ)

1. Տեղեկատվություն Խմբի վերաբերյալ

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի («Ընկերություն») և իր դուստր ընկերությունների (միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

Ընկերությունը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 1997 թվականին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան 19:

Խմբի նախատեսված հիմնական գործունեությունն է հանդիսանում պոլիմեր-մոլիբդենային հանքաքարի արդյունահանումը, դրա վերամշակման միջոցով պոլիմերի և մոլիբդենի խտանյութերի արտադրությունն ու իրացումը:

Խումբը հանդիսանում է «Թեդուտ» ՓԲԸ-ի վերջնական մայր ընկերություն («Teghout Investments Limited» (Կիպրոս) դուստր ընկերության միջոցով):

Խմբին պատկանում է «Teghout Investments Limited» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 50.05%, մնացած բաժնետոմսերը պատկանում են «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի կողմից ղեկավարվող «ՎՏԲ» խմբին: «Teghout Investments Limited» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 49.95% մասնակցության իրավունք չեն տալիս, սակայն պաշտպանական իրավունք են տալիս «ՎՏԲ» խմբին:

Խումբն ունի ներդրումներ «Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ում (Հայաստան), «Գուգարքի Գեո» ԲԲԸ-ում (Հայաստան), «Վալլեքս Այ -Թի» ՍՊԸ-ում (Հայաստան):

Ընկերության վերջնական վերահսկող անձ է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Բաժնետերը նաև մասնակցություններ ունի Ընկերությանը չպատկանող այլ կազմակերպություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

Համապատասխանության մասին հայտարարություն

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան, որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՄՄԽ») կողմից: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

2011թ. տվյալներում կատարվել են եկամուտների և ծախսերի ոչ նշանակալի վերադասակարգումներ՝ 2012թ. ներկայացված տեղեկատվության ձևաչափին համապատասխանեցնելու նպատակով:

2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են Խմբի ընկերությունների 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններից:

Դուստր ընկերություններն ամբողջապես համախմբվում են Խմբի կողմից վերահսկողություն ձեռք բերելու պահից սկսած և շարունակվում են համախմբվել, մինչև այդ վերահսկողությունը չի դադարում:

Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են մայր ընկերության հետ միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով հետևողական հաշվապահական հաշվառման քաղաքականություններ: Ներխմբային բոլոր հաշիվները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժինները ամբողջությամբ բացառվում են:

Այն դեպքում, երբ դուստր ընկերություններում բաժնեմասը 100%-ից պակաս է և դրա հետևանքով առկա է չվերահսկող բաժնեմաս, չվերահսկող բաժնեմասին է վերագրվում ժամանակաշրջանի համար ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքների իրենց բաժինը, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

(հազար ՀՀ դրամ)

2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները (շարունակություն)

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերության սեփականության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալի փոփոխություն: Եթե Խումբը կորցնում է դուստր ընկերության նկատմամբ վերահսկողությունը, այն՝

- ▶ ապաճանաչում է դուստր ընկերության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները,
- ▶ ապաճանաչում է չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը,
- ▶ ապաճանաչում է սեփական կապիտալում ճանաչված կուտակված փոխարժեքային տարբերությունները,
- ▶ ճանաչում է ստացված հատուցման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է մնացած ներդրման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում,
- ▶ վերադասակարգում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված մայր ընկերության տարրերի բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում, որը որ ավելի համապատասխան է կոնկրետ ՖՀՄՍ պահանջներին:

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար ձեռքբերող կողմը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի գուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են և ներառվում վարչական ծախսերում:

Երբ Խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգում է պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Այն ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերով նախատեսված պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատումը:

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռք բերողը սեփական կապիտալում իր նախկինում ունեցած ձեռք բերվողի բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ ձեռքբերողն ունի վերահսկողություն) իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռք բերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգված է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում՝ մինչև կապիտալում ամբողջական մարումը:

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի գուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր ընկերության գուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռք բերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե ոչ:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուդվիլ (շարունակություն)

Եթե գուդվիլը վերագրվել է այնպիսի դրամաստեղծ միավորի, որի մի մասն օտարվել է, ապա օտարված գործունեությանն առնչվող գուդվիլը գործունեության օտարումից օգուտը կամ վնասը հաշվելու ժամանակ ներառվում է գործունեության հաշվեկշռային արժեքում: Այս պարագայում օտարված գուդվիլը չափվում է օտարված գործունեության և դրամաստեղծ միավորի մնացած մասի հարաբերակցության հիմունքով:

Հանքաքարի պաշարների և օգտակար հանածոների գնահատումներ

Հանքաքարի պաշարները գնահատվել են այն չափով, որքանով հնարավոր է տնտեսապես և օրինական հիմունքներով արդյունահանումը Խմբի հանքերից: Խումբը գնահատում է հանքաքարի պաշարները և օգտակար հանածոները համապատասխան որակավորում ունեցող մասնագետներից ստացված հանքամարմնի չափերի, խորության, ձևի և աստիճանի, ինչպես նաև արտադրության հարմար տեխնոլոգիաների և վերականգնման աստիճանների մասին տեղեկատվության հիման վրա:

Դա պահանջում է բարդ երկրաբանական դատողություններ տվյալները մեկնաբանելու ընթացքում: Վերականգնվող պաշարների գնահատականները հիմնված են արտարժույթի փոխարժեքների, ապրանքների գների, ապագա կապիտալացման պահանջների և արտադրության ծախսումների գնահատման վրա՝ հանքամարմնի չափի և աստիճանի վերաբերյալ կատարված երկրաբանական դատողությունների և ենթադրությունների հետ միասին:

Քանի որ կիրառված տնտեսական ենթադրությունները կարող են փոփոխվել և քանի որ հանքի գործարկման ժամանակ լրացուցիչ երկրաբանական տեղեկատվություն կարող է ի հայտ գալ, պաշարների գնահատումը կարող է փոփոխվել: Նման փոփոխությունները կարող են անդրադառնալ Խմբի ներկայացված ֆինանսական վիճակի և արդյունքների վրա, ինչը ներառում է՝

- ▶ հետախուզման և գնահատման ակտիվների, հանքերի, հիմնական միջոցների և գուդվիլի հաշվեկշռային արժեքները կարող են փոփոխվել՝ կախված գնահատված ապագա դրամական հոսքերի փոփոխություններից;
- ▶ շահույթում կամ վնասում ճանաչված մաշվածության և ամորտիզացիայի ծախսերը կարող են փոփոխվել, եթե նման ծախսերը որոշվում են օգտագործելով թողարկված միավորների մեթոդը, կամ այն դեպքում, երբ կապակցված ակտիվների օգտակար գործողության ժամկետն է փոփոխվում,
- ▶ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված կապիտալացված, կամ շահույթում կամ վնասում ծախսագրված մակաբացման ծախսումները կարող են փոփոխվել մակաբացման գործակցի փոփոխության արդյունքում,
- ▶ շրջակա միջավայրի գծով վերականգնման պահուստները կարող են փոփոխվել այն դեպքերում, երբ պահուստների գնահատականների վրա անդրադառնում են այդ գործողությունները տեղի ունենալու ժամկետները և այդ գործողությունների հետ կապված ծախսումները,
- ▶ շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը և հաշվեկշռային արժեքը կարող է փոփոխվել՝ նման ակտիվների գոյության վերաբերյալ դատողությունների և նման ակտիվների հնարավոր վերականգնման գնահատումների փոփոխություններից կախված:

Հետախուզման և գնահատման ծախսումներ

Խմբի հետախուզման և գնահատման ծախսումների գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը պահանջում է դատողություն՝ որոշելու արդյո՞ք հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն շահագործումից կամ վաճառքից, կամ գործունեությունը դեռ չի հասել այն մակարդակի, որը թույլ կտա պաշարների գոյության վերաբերյալ ողջամիտ գնահատականներ տալ: Հանքաքարի պաշարների որոշումն ինքնին գնահատման գործընթաց է, որը պահանջում է անորոշության տարբեր մակարդակներ՝ կախված ենթադասակարգումից (չափվող, գնահատման ենթակա կամ նախագուշակվող): Այդ գնահատումներն ուղղակիորեն ազդում են հետախուզման և գնահատման ծախսումների հետաձգման պահի որոշման վրա:

Հետաձգման քաղաքականությունը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի որոշակի գնահատումներ և ենթադրություններ ապագա իրադարձությունների կամ պայմանների վերաբերյալ, մասնավորապես, արդյո՞ք հնարավոր է իրականացնել տնտեսապես կենսունակ արդյունահանման գործունեություն: Կատարված գնահատականները և ենթադրությունները կարող են փոխվել՝ նոր տեղեկատվության ի հայտ գալուն պես: Եթե ծախսումների կապիտալացումից հետո ի հայտ է գալիս այնպիսի տեղեկատվություն, ըստ որի ծախսումների փոխհատուցումը հավանական չէ, կապիտալացված գումարը դուրս է գրվում շահույթ կամ վնաս այն ժամանակաշրջանում, երբ ի հայտ է գալիս նոր տեղեկատվությունը:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտադրությունը սկսելու ամսաթիվ

Խումբը գնահատում է, թե յուրաքանչյուր կառուցման մեջ գտնվող հանքը ինչ փուլում է՝ որոշելու, թե երբ է հանքը անցնելու արտադրության փուլ: Արտադրության սկզբի ամսաթվի գնահատման չափանիշը որոշվում է՝ յուրաքանչյուր հանքի կառուցման նախագծի յուրահատուկ բնույթից կախված, ինչպես օրինակ՝ նախագծի բարդությունն է և գտնվելու վայրը: Խումբը հաշվի է առնում տարբեր չափանիշներ գնահատելու, թե երբ է արտադրության փուլը մեկնարկելու: Այդ պահին բոլոր համապատասխան գումարները վերադասակարգվում են «Կառուցման մեջ գտնվող հանքերից» «Գործող հանքեր» և/կամ «Հիմնական միջոցներ» հոդվածներ: Արտադրությունը սկսելու ամսաթիվը որոշելու համար կիրառվող որոշ չափանիշները ընդգրկում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- ▶ կատարված կապիտալ ծախսումների մակարդակը համեմատած կառուցման ծախսումների գնահատականների հետ,
- ▶ հանքի հիմնական միջոցների ստուգման աշխատանքների ողջամիտ ժամանակաշրջանի ավարտ,
- ▶ վաճառքի համար պիտանի մետաղի արտադրություն (տեխնիկական բնութագրերին համապատասխան) կարողությունը,
- ▶ մետաղի ընթացիկ արտադրությունը շարունակելու կարողություն:

Երբ հանքի մշակման/կառուցման նախագիծն անցնում է արտադրության փուլ, տվյալ հանքի մշակման/կառուցման ծախսումների կապիտալացումը դադարում է և ծախսումները կա՛մ դիտարկվում են որպես պաշարների ինքնարժեքի մաս, կա՛մ ծախսագրվում են՝ բացառությամբ հանքերի ավելացմանը կամ բարելավմանը վերագրվող կապիտալացման ենթակա ծախսումների, ստորգետնյա հանքերի մշակման ծախսումների և արդյունահանման ենթակա պաշարների մշակման ծախսումների: Այս փուլում է նաև, որ սկսվում է մաշվածությունը/ամորտիզացիան:

Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ

Խումբը գնահատում է հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտում է այն ՖՀՄՄԿ (IFRIC) 1 «Փոփոխություններ ապագործարկման, վերականգնման և նմանատիպ գոյություն ունեցող պարտավորություններում» մեկնաբանության պահանջներին համապատասխան ընթացիկ լավագույն գնահատումը ստանալու նպատակով: Պահուստի չափն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պարտավորությունը կարգավորելու համար ծախսումների լավագույն գնահատումը: Պահուստի լավագույն չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում ռիսկերն ու անորոշությունները, որոնք անխուսափելի են շատ դեպքերում և իրավիճակներում: Հողերի վերականգնման ապագա ծախսումների գնահատման համար անհրաժեշտ են ղեկավարության էական դատողություններ: Ապագա իրադարձությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ պարտավորության կարգավորման համար անհրաժեշտ գումարի վրա, արտացոլվում են պահուստի գումարում, եթե առկա են անկողմնակալ վկայություններ այն մասին, որ դրանք կարող են տեղի ունենալ:

Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել : Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը:

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, սովորաբար՝ ապրանքների մատակարարման ժամանակ:

Հետևյալ չափանիշները նույնպես պետք է բավարարվեն նախքան հասույթի ճանաչումը:

Ոսկու և պղնձի խտանյութի վաճառք

Խմբի՝ հանածոյի ոսկու և պղնձի պարունակության (մետաղի խտանյութի) վաճառքի պայմանագրի պայմանները թույլ են տալիս գների ճշգրտումներ՝ հիմնված հաճախորդի կողմից մետաղի խտանյութի վերջնական պարունակությունը պարզելու համար վերջնական փորձարկման արդյունքների վրա: Այս պայմանագրերը հանդիսանում են նախնական գնագոյացման համաձայնություններ, որտեղ մետաղ խտանյութի հանածոյի վաճառքի գինը հիմնված է հաճախորդին մատակարարելուց հետո նշված ամսաթվի դրությամբ (գնանշման ժամանակահատվածը) շուկայում գերիշխող սփոթ գների վրա: Վաճառքի գնի ճշգրտումները ի հայտ են գալիս գնանշված շուկայական գնի փոփոխությունների արդյունքում մինչ վերջնական մարման ամսաթիվը: Նախնական հաշվի ներկայացման և վերջնական մարման միջև ընկած ժամանակահատվածը կարող է մեկ ամսից մինչև վեց ամիս լինել:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հասույթի ճանաչում (շարունակություն)

Մետաղ պարունակող խտանյութի նախնական գնանշման բնութագրիչներով վաճառքի պայմանագրերը ենթադրվում է, որ ներառում են պարունակվող ածանցյալ գործիք, որը պետք է անջատվի հիմնական պայմանագրից հաշվապահական հաշվառման նկատառումներով: Հիմնական պայմանագրերը վերաբերում է մետաղ պարունակող խտանյութերի վաճառքին, իսկ պարունակվող ածանցյալ գործիքը հանդիսանում է ֆորվարդային պայմանագիր, որի համար նախնական վաճառքը հետագայում ճշգրտվում է: Այս ապրանքների վաճառքից հասույթի ճանաչումը հիմնված է վերջերս խտանյութում մետաղի պարունակության գնահատման (հիմնված՝ սկզբնական փորձարկման արդյունքների վրա) և փոխանցման ամսաթվի դրությամբ սիդո գների վրա: Այսպիսով, հեջի հաշվառման պահանջներին չհամապատասխանող պարունակվող ածանցյալ գործիքը ճանաչվում է իրական արժեքով, որի հետագա փոփոխությունները մինչև վերջնական մարումը յուրաքանչյուր ժամանակաշրջանում ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գնանշման ընթացքում և մինչ վերջնական մարումը իրական արժեքի փոփոխությունները հաշվարկվում են ոսկու և պղնձի ֆորվարդային շուկայի գները հաշվի առնելով:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ըստ աշխատանքների ավարտվածության աստիճանի: Յուրաքանչյուր պայմանագրի ավարտվածության աստիճանը չափվում է ելնելով մինչև հաշվետու ամսաթիվը աշխատած աշխատաժամերի և գնահատված ընդհանուր աշխատաժամերի հարաբերակցությունից: Երբ պայմանագրի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը ճանաչվում է այնքանով, որքանով կատարված ծախսերը ենթակա են փոխհատուցման:

Տոկոսային եկամուտ

Ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը հաշվառվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը՝ դրույք, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրիտ գեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Տոկոսային եկամուտը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամտում:

Շահաբաժիններ

Հասույթը ճանաչվում է, երբ սահմանված է Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը:

Վարձակալությունից եկամուտ

Ներդրումային գույքի գործառնական վարձակալությունից վարձակալական եկամուտը հաշվառվում է գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամուտների մեջ՝ իր ոչ գործառնական բնույթից ելնելով:

Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են, երբ գոյություն ունի հիմնավոր հավաստիացում, որ շնորհը ստացվելու է և բոլոր կից պայմանները բավարարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հողվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում պարբերական հիմունքով ծախս են ճանաչվում այն ծախսումները, որոնց այն պետք է փոխհատուցի: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես եկամուտ՝ հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Երբ Խումբը ստանում է ոչ դրամային շնորհներ, ակտիվը և շնորհը հաշվառվում են անվանական արժեքներով և ներառվում շահույթում կամ վնասում ըստ ակնկալվող օգտակար ծառայության և տնտեսական օգուտների սպառման մոդելի՝ հավասարաչափ տարեկան գումարներով:

Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկի շահութահարկի հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ կամ վճարել հարկային մարմիններին: Հարկային դրույքերը և հարկային օրենսդրությունը, որն օգտագործվում է գումարների հաշվարկման համար հաշվետվության ամսաթվին կիրառելի կամ փաստացի կիրառվող դրույքներն ու օրենսդրությունն են:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկեր (շարունակություն)

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն դեպքերի.

- ▶ Երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գուդվիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային գեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային գեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի

- ▶ երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց ամբողջությամբ կամ մասնակիորեն կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված (և կիրառման ենթակա) օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հողվածների գծով ճանաչված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հողվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին զուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն անրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս՝ ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, ճանաչվում են հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկեր (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ

Վաճառքի գծով ավելացված արժեքի հարկի պարտավորությունը հաճախորդներին ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման դիմաց հարկային մարմիններին վճարման ենթակա գումար է: Գնումների գծով ԱԱՀ-ը հիմնականում հաշվանցվում է վաճառքի գծով ԱԱՀ-ին: Հարկային մարմինները թույլ են տալիս մարել ԱԱՀ-ը գույս հիմքի վրա: Վաճառքի կամ գնումների գծով ԱԱՀ-ը ճանաչվում է հաշվեկշռում գույս հիմունքով և առանձին բացահայտվում է որպես ակտիվ կամ պարտավորություն: Երբ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ է ձևավորվում, արժեզրկման գծով վնասը հաշվարկվում է դեբիտորական պարտքի համախառն գումարի համար՝ ներառյալ ԱԱՀ-ը:

Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ գույս կուտակված մաշվածությունից և արժեզրկումից կուտակված կորուստներից:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ, ակտիվների ապատեղակայման և տեղափոխման, դրանց գրաված տարածքի վերականգնման և փոխառությունների գծով կապիտալացվող ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագրեր, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է գույս հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցիչ օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցիչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթով կամ վնասով՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլվում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- ▶ արտադրական սարքավորումներ՝ 5-10 տարի
- ▶ շենքեր և կառույցներ՝ 20-50 տարի
- ▶ փոխադրամիջոցներ՝ 5-10 տարի
- ▶ այլ՝ 5-10 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

Հանքարդյունաբերական գույք

Հանքարդյունաբերական գույքը ներկայացվում է որպես ակտիվների առանձին դաս: Հանքարդյունաբերական գույքի սկզբնական արժեքն իրենից ներկայացնում է հանքավայրի տարածքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները և ներառում է հետազոտման, տեղանքի վերականգնման, մակաբացման և հանքաքարի արդյունահանման նախապատրաստման աշխատանքների գծով ծախսումները:

Հանքարդյունաբերությանը հատուկ ակտիվներին մաշվածությունը և/կամ ամորտիզացիան որոշելու համար կիրառվում են տնտեսապես փոխհատուցելի պաշարների ծավալների գնահատականները: Սա հանգեցնում է մաշվածության գծով ծախսումների հանքի արտադրության մնացորդային ժամկետի սպառմանը համամասնորեն հաշվառմանը: Յուրաքանչյուր հողվածի օգտակար ծառայություն, որը գնահատվում է տարեկան, կապված է և՛ վերջինիս ֆիզիկական օգտակար ծառայության սահմանափակումների, և՛ հանքի, որի վրա տեղակայված է ակտիվը, տնտեսապես փոխհատուցելի պաշարների ընթացիկ գնահատականների հետ: Այս հաշվարկները պահանջում են ենթադրությունների և գնահատականների կիրառում՝ ներառյալ փոխհատուցելի պաշարների ծավալները և ապագա կապիտալ ծախսումների գնահատականը:

Հանքարդյունաբերության ծախսումների համար Խումբը կիրառում է ըստ արտադրված արտադրանքի միավորի հաշվեգրման մեթոդը՝ հիմնվելով տնտեսապես վերականգնվող պաշարների վրա, որոնց վերաբերում է տվյալ գույքը, կամ դուրս է գրվում, եթե գտնվում է ոչ աշխատանքային վիճակում:

Գործառնական վարձակալություն

Այն պարագայում, երբ Խումբը վարձակալ է հանդիսանում վարձակալության պայմանագրի համաձայն, և երբ վարձակալական պայմանագրով վարձատուից Խմբին չեն փոխանցվում վարձակալվող գույքի սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերը և հատուցները, վարձակալական բոլոր վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության ժամկետը չեղյալ չհամարվող այն ժամկետն է, որի ընթացքում վարձակալը վարձակալում է ակտիվը հետագա այլ ժամանակաշրջանների հետ միասին, որոնց ընթացքում վարձակալը հնարավորություն ունի շարունակել ակտիվի վարձակալությունը, երբ վարձակալությունը սկսելու ժամանակ արդեն իսկ պարզ է, որ վարձակալն օգտագործելու է իր հնարավորությունը:

Խումբը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցում է Խմբին, կապիտալացվում է վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի փոքր է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցմանը այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այն դեպքում, երբ չկա ողջամիտ հավաստիացում, որ Խումբը վարձակալության ժամկետի ավարտին կատանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Խումբը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները չեն փոխանցվում վարձակալին, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնավորման ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում այնպես, ինչպես վարձակալական եկամուտը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում դրանք վաստակվում են:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, և որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված Խմբի կողմից նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար, կապիտալացվում են որպես ակտիվի սկզբնական արժեքի մաս: Փոխառության մնացած բոլոր ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Փոխառության ծախսումները բաղկացած են տոկոսից և այլ ծախսումներից, որը կազմակերպությունը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

Խումբը կապիտալացնում է 2009թ. հունվարի 1-ից սկսած ժամանակահատվածում կառուցված բոլոր սահմանված չափանիշներին համապատասխանող ակտիվների փոխառության ծախսումները:

Ոչ նյութական ակտիվներ

Ճանաչում և չափում

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացվում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գույքիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիան հաշվեզրվում է դրանց շահագործման ենթակա լինելու պահից և ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- ▶ Լիցենզիաներ՝ լիցենզիայի գործողության ժամկետ
- ▶ Այլ ոչ նյութական ակտիվներ՝ 5-10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ

Չափման նկատմամբ հիմնական մոտեցումներ

Համաձայն ՀՀՄՍ 39 «Ֆինանսական ակտիվներ՝ ճանաչումը և չափումը» ստանդարտի դրույթների՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարումը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Խումբը որոշում է ֆինանսական ակտիվի դասը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ իրական արժեքով չափվող ակտիվների՝ շահույթի կամ վնասի միջոցով, ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի կիրառելի գործարքի հետ կապված ծախսերը: Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների առաքում շուկա (կանոնավոր վաճառքի վայր) օրենքով կամ պայմանագրով սահմանված ժամանակահատվածում, ճանաչվում է վաճառքի օրը, այսինքն՝ այն օրը, երբ Խումբը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Խումբը ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրված փոխառությունները, ինչպես նաև առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների խումբը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որը կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել դեբիտորների կամ դեբիտորների խմբի գզալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կարող են հանգեցնել ձախողումների:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման անկողմնակալ վկայություն, անկախ այն հանգամանքից, նշանակալի է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման պարտքային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից կորուստներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով: Արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության առկայության դեպքում՝ արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ՝ պարտքի հետ կապված դեռևս չկրած ապագա վնասները) ներկա արժեքի տարբերությունն է:

Ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվների սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե վարկն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկման կորուստ գնահատելու համար որպես զեղչման դրույք օգտագործվում է ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի հաշվի միջոցով, իսկ արժեզրկումից կորուստն արտացոլվում է շահույթում կամ վնասում:

Տոկոսային եկամուտները շարունակվում են հաշվեզրվել նվազեցված հաշվեկշռային արժեքից՝ օգտագործելով արժեզրկման կորուստը հաշվելու նպատակով ապագա դրամական հոսքերը գեղջելու տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտներն արտացոլվում են շահույթում կամ վնասում որպես ֆինանսական եկամուտ: Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարիներին գնահատված արժեզրկման կորուստն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման կորուստն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե այսպիսի դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ, չսփվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և փոխառություններ կամ ածանցյալ գործիքներ: Խումբը որոշում է ֆինանսական պարտավորության դասը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ ներառյալ ուղղակի վերագրելի գործարքային ծախսերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները հիմնականում ներառում են վարկերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Վարկեր և փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո տոկոսային վարկերն ու փոխառությունները հետագայում չսփվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած գեղջ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը: Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա պետք է հին պարտավորությունը ապաճանաչել և նոր պարտավորությունը ճանաչել: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը

Սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

Խումբն օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքներ՝ արժույթային ֆորվարդ պայմանագրեր, տոկոսային սվոպեր և ապրանքային ֆորվարդ պայմանագրեր, համապատասխանաբար արտարժույթային, տոկոսադրույքի և ապրանքների գների հետ կապված ռիսկերը հեջավորելու համար: Նման ածանցյալ ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով այն ժամանակ, երբ ածանցյալ պայմանագիրը կնքվում է և հետագայում վերաչափվում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվներ դրական իրական արժեքի դեպքում և որպես ֆինանսական պարտավորություններ, երբ իրական արժեքը բացասական է:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը (շարունակություն)

Գնման ապրանքային պայմանագրերի իրական արժեքները, որոնք բավարարում են ՀՀՄՍ 39-ով սահմանված ածանցյալ գործիքի սահմանմանը, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վաճառքի ինքնարժեքում: Ապրանքային պայմանագրերը, որոնք կնքվում և շարունակվում են պահվել ոչ ֆինանսական միջոցներ ստանալու կամ փոխանցելու նպատակով՝ համաձայն Խմբի ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջների, պահվում են սկզբնական արժեքով: Ածանցյալ գործիքների իրական արժեքների փոփոխություններից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս ուղղակիորեն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ դրամական հոսքերի հեջերի արդյունավետ մասի, որը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Հեջավորումը հաշվառելու նպատակով հեջերը դասակարգվում են որպես՝

- ▶ իրական արժեքի հեջեր, երբ հեջավորվում են ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ խմբի չճանաչված կայուն պարտավորվածության իրական արժեքների փոփոխության ենթարկվածությունը,
- ▶ դրամական միջոցների հոսքերի հեջեր, երբ հեջավորվում են դրամական միջոցների հոսքերի տատանումներին ենթարկվածությունը, որոնք կամ վերագրվում են ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ առավել հավանական կանխատեսված գործարքի որոշակի ռիսկին, կամ խմբի չճանաչված կայուն պարտավորվածությունում արտարժույթային ռիսկին,
- ▶ արտերկրյա ստորաբաժանումում գուտ ներդրման հեջեր:

Հեջավորման փոխհարաբերության սկզբին Խումբը պաշտոնապես սահմանում և փաստաթղթերով ձևակերպում է հեջավորման փոխհարաբերություն, որի նկատմամբ Խումբը ցանկանում է կիրառել հեջի հաշվառումը, ինչպես նաև հեջի գծով ռիսկի կառավարման նպատակներն ու ռազմավարությունը: Փաստաթղթերը ներառում են հեջավորման գործիքի, հեջավորված գործիքի կամ գործարքի, հեջավորված ռիսկի բնույթի որոշակիացումը, և այն, ինչպես կազմակերպությունը կգնահատի հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխության արդյունավետությունը՝ հաշվանցելու հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխության կամ հեջավորված ռիսկին վերագրվող դրամական միջոցների հոսքի ենթարկվածությունը: Նման հեջերը ակնկալվում է, որ կունենան իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունների հակադարձման մեծապես արդյունավետություն և շարունակական հիմունքով գնահատվում են որոշելու, թե արդյոք դրանք իրականում մեծապես արդյունավետ էին այն ֆինանսական հաշվետվությունների ժամանակաշրջաններում, որոնց համար դրանք նախատեսված էին:

Հեջերը, որոնք համապատասխանում են հաշվառման հստակ չափանիշներին, հաշվառվում են հետևյալ կերպ՝

Իրական արժեքի հեջավորում

Հեջավորող ածանցյալ գործիքի իրական արժեքում փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս: Հեջավորված ռիսկին վերաբերող հեջավորվող հոդվածի իրական արժեքի փոփոխությունը հաշվառվում է որպես հեջավորվող հոդվածի հաշվեկշռային արժեքի մաս և միաժամանակ ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող հոդվածների իրական արժեքով հեջերի հաշվեկշռային արժեքի ցանկացած ճշգրտում ամորտիզացվում է շահույթի կամ վնասի միջոցով հեջի մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացիան կարող է սկսվել այն պահից, երբ ճշգրտումը կատարվում է և ոչ ուշ, քան հեջավորված հոդվածը դադարում է ճշգրտվել հեջավորվող ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխություններով:

Եթե հեջավորվող հոդվածն ապաճանաչվում է, ապա չամորտիզացվող իրական արժեքն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ Խմբի ֆինանսական վիճակում չճանաչված կայուն պարտավորվածությունը սահմանված է որպես հեջավորվող հոդված, ապա հեջավորվող ռիսկին վերագրվող կայուն պարտավորվածության իրական արժեքի հետագա կուտակային փոփոխությունը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, իսկ համապատասխան օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը (շարունակություն)

Ղրամական միջոցների հոսքերի հեջավորում

Հեջավորման գործիքից օգուտի կամ վնասի արդյունավետ մասն ուղղակիորեն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ղրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստում, իսկ ցանկացած ոչ արդյունավետ մաս միանգամից ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես այլ գործառնական ծախս:

Խումբը կանխատեսվող գործարքներում և կայուն պարտավորվածություններում արտարժույթային ռիսկին ենթարկվածությունը հեջավորելու համար օգտագործում է արժույթային ֆորվարդ պայմանագրեր, ինչպես նաև ապրանքային ֆորվարդ պայմանագրեր ապրանքների գների տատանումներին ենթարկվածությունը հեջավորելու համար: Արտարժույթային պայմանագրերին վերաբերող ոչ արդյունավետ մասը ճանաչվում է ֆինանսական ծախսերում, իսկ ապրանքային պայմանագրերին վերաբերող ոչ արդյունավետ մասը ճանաչվում է այլ գործառնական եկամուտներում:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները տեղափոխվում են շահույթ կամ վնաս, երբ հեջավորված գործարքը ազդեցություն ունի շահույթի կամ վնասի վրա, օրինակ՝ երբ ճանաչվում է հեջավորված հոդվածի գծով ֆինանսական եկամուտը կամ ֆինանսական ծախսը կամ, երբ կանխատեսված վաճառքը տեղի է ունենում:

Երբ հեջավորված հոդվածը հանդիսանում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության սկզբնական արժեքի մաս, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները տեղափոխվում են ոչ ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական հաշվեկշռային արժեք:

Եթե այլևս չի ակնկալվում, որ կանխատեսված գործարքը կամ կայուն պարտավորվածությունը տեղի կունենա, ապա սեփական կապիտալում նախկինում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը տեղափոխվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Եթե հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում, դադարեցվում կամ իրագործվում է առանց երկարաձգելու կամ փոխարինելու, կամ կազմակերպությունը չեղյալ է համարում նախատեսված հեջավորումը, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված ցանկացած օգուտ կամ վնաս մնում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում այնքան ժամանակ, մինչև կանխատեսված գործարքը կամ կայուն պարտավորվածությունը ազդեցություն կունենա շահույթի կամ վնասի վրա:

Չուտ ներդրումների հեջավորում

Արտերկրյա ստորաբաժանումում Չուտ ներդրման հեջը, ներառյալ Չուտ ներդրման մաս հաշվառվող ղրամական հոդվածների հեջը հաշվառվում է ղրամական միջոցների հոսքերի հեջերի նման: Հեջավորող գործիքների օգուտները կամ վնասները, որոնք վերաբերում են հեջի արդյունավետ մասին ճանաչվում են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ, իսկ ոչ արդյունավետ մասի գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Արտերկրյա ստորաբաժանումների օտարման դեպքում սեփական կապիտալում ներառված այդպիսի ցանկացած կուտակված օգուտները կամ վնասները տեղափոխվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ածանցյալ գործիքների դասակարգում որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

Որպես արդյունավետ հեջավորման գործիքներ չնախատեսված ածանցյալ գործիքները դասակարգվում են ընթացիկ կամ ոչ ընթացիկ կամ առանձնացվում են ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի փաստերի և հանգամանքների վրա հիմնվելով (այսինքն՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը):

- ▶ երբ Խումբն ունի ածանցյալ գործիք, որը նախատեսում է պահել որպես տնտեսական հեջ (և չի կիրառում հեջի հաշվառում) հաշվետու ամսաթվից հետո 12-ից ավել ամիսների ընթացքում, ապա ածանցյալ գործիքը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ (կամ առանձնացվում ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի) դրան վերաբերող հոդվածի դասակարգմանը համապատասխան,
- ▶ այն պարունակվող ածանցյալ գործիքները, որոնք սերտորեն կապված չեն ֆինանսական գործիքների հիմնական պայմանագրերին, դասակարգվում են հիմնական պայմանագրերով նախատեսված դրամական միջոցների հոսքերին համապատասխան,
- ▶ որպես հեջավորման գործիքներ սահմանված ածանցյալ գործիքները, որոնք նաև արդյունավետ են, դասակարգվում են հեջավորված հոդվածի դասակարգմանը համապատասխան: Ածանցյալ գործիքը առանձնացվում է ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի, եթե այդ տրոհումը կարող է արժանահավատորեն իրականացվել:

Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվը, որը չի դասվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների խմբին, դիտարկվում է արժեզրկված լինելու տեսանկյունից:

Ֆինանսական ակտիվն արժեզրկված է համարվում, եթե կա անկողմնակալ վկայության, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորուստ առաջացնող դեպք և որ այդ դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ակտիվից սպասվող ապագա դրամական միջոցների հոսքերի մեծության վրա, որը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայություններ կարող են հանդիսանալ չվճարումները կամ պարտապանների կողմից իրենց այլ պարտավորությունների չկատարումը, Խմբի նկատմամբ պարտավորության պայմանների այնպիսի վերանայումը, որն այլ դեպքերում Խմբի կողմից նույնիսկ չէր դիտարկվի, պարտապանի հնարավոր սնանկության հայտանիշները, պարտապանի վճարումների ընդհանուր վիճակի բացասական փոփոխությունները, ինչպես նաև տնտեսական այնպիսի իրավիճակները, որոնք կապվում են դեֆոլտների հետ:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունների և դեբիտորական պարտքերի արժեզրկման հայտանիշներն Խումբը դիտարկում է ինչպես առանձին ակտիվների, այնպես էլ պորտֆելի մակադրակով: Բոլոր այն ակտիվները, որոնց չափն անհատապես էական է, անհատապես են դիտարկվում արժեզրկման տեսանկյունից: Այն դեպքում, երբ պարզվում է, որ փոխառությունների և դեբիտորական պարտքերի անհատապես ստուգված տարրերը արժեզրկված չեն, դրանք ներառվում են պորտֆելում՝ արդեն առաջացած, բայց դեռևս չհայտնաբերված արժեզրկումը ստուգելու նպատակով: Փոխառությունների և դեբիտորական պարտքերի այն տարրերը, որոնց չափն անհատապես էական չէ, արժեզրկման տեսանկյունից դիտարկվում են խմբային հիմունքով՝ նման հայտանիշեր և ռիսկեր ունեցող փոխառություններն ու դեբիտորական պարտքերը միևնույն պորտֆելում ներառելով:

Խմբային արժեզրկման վկայությունները գնահատելիս Խումբը վերլուծում է դեֆոլտի հավանականության, ունեցած կորուստների գումարների և փոխհատուցման ժամկետների վերաբերյալ պատմական տվյալները՝ ճշգրտելով դրանք ընթացիկ տնտեսական և վարկային պայմանների վերաբերյալ ղեկավարության դատողություններով: Ճշգրտումների արդյունքում փաստացի կորուստները հնարավոր է ավելի մեծ կամ փոքր լինեն, քան այն կորուստները, որոնք կալնկավվելին միայն պատմական միտումներից ելնելով:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի՝ ֆինանսական ակտիվների սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ներկա արժեքի տարբերություն:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արժեզրկում (շարունակություն)

Կորուստները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում որպես պահուստ, որի գումարը նվազեցվում է փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի գումարից: Տոկոսները շարունակվում են հաշվեզրկել արժեզրկված ակտիվի նկատմամբ «զեղչի հետադարձման» միջոցով: Եթե գնահատված արժեզրկման կորուստը հաջորդող տարիներին նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, ապա վերականգնված գումարը ճանաչվում է ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերլուծվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հնարավոր արժեզրկման հայտանիշների բացահայտման նպատակով: Այդպիսի հայտանիշի առկայության դեպքում հաշվարկվում է համապատասխան ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն պարագայում, երբ ակտիվի կամ համապատասխան դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելի բարձր է հաշվարկված փոխհատուցվող գումարից:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն այդ ակտիվի (միավորի) օգտագործման արժեքից և վաճառքի ծախսումներով նվազեցված իրական արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը հաշվարկելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքին՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվի/դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը: Արժեզրկման տեսանկյունից դիտարկման նպատակով ակտիվները, որոնք չեն կարող անհատապես ստուգվել, միավորվում են ամենամիտքը խմբում, որի շրջանակներում ստեղծվում է համապատասխան ակտիվների շարունակական օգտագործումից դրամական միջոցների ներհոսքը, և այդ ներհոսքը հիմնականում կախված չէ այլ ակտիվների կամ միավորների միջոցով ստեղծված դրամական հոսքերից:

Կորպորատիվ ակտիվի արժեքը բաշխվում է դրամաստեղծ միավորների միջև որևէ տրամաբանական և հետևողական հիմքով և իր արժեզրկման ստուգումն իրականացվում է այն դրամաստեղծ միավորի թեստավորման շրջանակներում, որի վրա բաշխվել է տվյալ կորպորատիվ ակտիվը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների արժեզրկումից կորուստները համաչափորեն վերագրվում են այդ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմում գտնվող ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազմանը:

Նախորդ ժամանակաշրջաններից մեկում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է այդ կորուստի չափի նվազեցմանը կամ ճանաչման դադարեցմանը հանգեցնող հայտանիշների բացահայտման նպատակով: Որպես արժեզրկումից կորուստ ճանաչված գումարները վերականգնվում են այն դեպքում, եթե փոխվում են համապատասխան փոխհատուցվող գումարի հաշվարկի ընթացքում օգտագործված գնահատման գործոնները: Արժեզրկումից կորուստը վերականգնվում է միայն այն գումարի սահմաններում, որը թույլ է տալիս վերականգնել ակտիվների արժեքը մինչև հաշվեկշռային արժեքը, որով դրանք կարտահայտվեն (կուտակված մաշվածությունից զուտ), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների արժեքը որոշվում է առաջին մուտք առաջին ելք սկզբունքի հիման վրա և իր մեջ ներառում է պաշարների ձեռքբերման և ներկա գտնվելու վայր և վիճակին բերելու հետ կապված ծախսումները:

Կանխավճարներ

Կանխավճարները հաշվեկշռում ընդգրկվում են արժեզրկման պահուստով նվազեցված արժեքով: Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ այն պարագայում, երբ կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները նախատեսվում է ձեռք բերել մեկ տարի հետո կամ երբ կանխավճարները վերաբերում են ակտիվներին, որոնք դասակարգվում են որպես ոչ ընթացիկ սկզբնական ճանաչման ժամանակ: Ակտիվի ձեռքբերման գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին այն ժամանակ, երբ Խմբին է անցնում ակտիվի տիրապետումը և հնարավոր է դառնում, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ: Այլ կանխավճարները դուրս են գրվում շահույթ կամ վնաս, երբ կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները ձեռք են բերվում: Եթե կանխայանիշեր, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում և համապատասխան արժեզրկման վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(հազար ՀՀ դրամ)

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, ցպահանջ դրամական միջոցները բանկային հաշվին, ինչպես նաև այլ կարճաժամկետ բարձր իրացվելիությամբ ներդրումներ բանկերում և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիության ներդրումներ՝ ոչ ավել, քան 3 ամիս նախնական ժամկետայնությամբ:

Բաժնետիրական կապիտալ

Հասարակ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրվող լրացուցիչ ծախսումներն արտացոլվում են այդ թողարկման արդյունքում առաջացած սեփական կապիտալում հարկերից զտված մասով: Թողարկված բաժնետոմսերի իրական և անվանական արժեքների տարբերությունից ստացված ցանկացած ավելցուկ հաշվառվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատավարձերը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող սոց. վճարները, տարեկան վճարվող արձակուրդը, անաշխատունակության դիմաց վճարները, պարգևավճարները և ոչ դրամական վարձատրությունները (ինչպես օրինակ աշխատողների բժշկական ապահովագրությունը և երեխաներին պահելու ծառայությունները) հաշվեգրվում են այն տարում, որում համապատասխան ծառայությունները մատուցվել են Խմբի աշխատակիցների կողմից: Աշխատողները ստանում են թոշակներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից օրենսդրությանը համապատասխան: Վճարումները պետական բյուջե կատարվում են Խմբի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են այն դեպքում, երբ տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ պարտավորությունը լուծելու համար տնտեսական միջոցների արտահոսքը հավանական է և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Պայմանական պարտավորությունները բացահայտվում են այն դեպքում, երբ առկա է տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականություն:

Արտարժույթի վերահաշվարկ

Խմբի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որում այն գործում է: Խմբի գործառնական արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ հայկական դրամը (ՀՀ դրամ):

Դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված պաշտոնական հաշվարկային դրույքաչափերը: Տարվա վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության ԿԲ կողմից սահմանված հաշվարկային դրույքաչափերի միջոցով դրամական ակտիվների և պարտավորությունների գործառնական արժույթով վերահաշվարկից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ: Տարվա վերջի վերահաշվարկը չի կիրառվում այն ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են պատմական արժեքով:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթային հաշիվների վերահաշվարկման համար օգտագործված կուրսերը հետևյալն են. 403.58 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար (2011թ.՝ 385.77ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար), 532.24 ՀՀ դրամ/Եվրո (2011թ.՝ 498.72 ՀՀ դրամ/Եվրո), 13.27 ՀՀ դրամ/ռուսական ռուբլի (2011թ.՝ 11.98 ՀՀ դրամ/ռուսական ռուբլի):

(հազար ՀՀ դրամ)

2.4 Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Արտարժույթի վերահաշվարկ (շարունակություն)

Ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը համապատասխանում է նախորդ ֆինանսական տարվա քաղաքականությանը, բացառությամբ հետևյալ նոր և լրացված ՖՀՄՍ-ների և ՖՀՄՄԿ մեկնաբանությունների, որոնք ուժի մեջ են մտել 2012թ. հունվարի 1-ից՝

- ▶ Փոփոխություններ ՀՀՄՍ 12 «Շահութահարկեր» ստանդարտում՝ *Հետաձգված հարկի հիմքում ընկած ակտիվի փոխհատուցում*
- ▶ Փոփոխություններ ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտում՝ *Ապաճանաչման ընդլայնված բացահայտումների պահանջներ*

Տվյալ ստանդարտների և մեկնաբանությունների ընդունումը նկարագրված է ստորև՝

Փոփոխություններ ՀՀՄՍ 12 ստանդարտում՝ *Հետաձգված հարկի հիմքում ընկած ակտիվի փոխհատուցում*

Փոփոխությունը պարզաբանել է իրական արժեքով չափվող ներդրումային գույքի գծով հետաձգված հարկի որոշումը և ներմուծել է հերքվող ենթադրություն այն մասին, որ ՀՀՄՍ 40 ստանդարտի համաձայն իրական արժեքով չափվող ներդրումային գույքի գծով հետաձգված հարկը պետք է չափվի տվյալ ներդրումային գույքի վաճառքի միջոցով իր հաշվեկշռային արժեքի վերականգնման վերաբերյալ ենթադրության հիման վրա: Այն նաև ներառում է պահանջ այն մասին, որ ՀՀՄՍ 16 ստանդարտի համաձայն վերագնահատման մոդելի միջոցով գնահատվող չմաշվող ակտիվների նկատմամբ հետաձգված հարկը միշտ պետք է գնահատվի հիմք ընդունելով ակտիվների վաճառքը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Տվյալ փոփոխությունն ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, գործունեության կամ բացահայտումների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 7 ստանդարտում՝ *Ապաճանաչման ընդլայնված բացահայտումների պահանջներ*

Փոփոխությունը պահանջում է լրացուցիչ բացահայտումներ այն ֆինանսական ակտիվների վերաբերյալ, որոնք փոխանցվել են, սակայն չեն ապաճանաչվել, որպեսզի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հնարավորություն ընձեռվի հասկանալ կապը դրանց և դրանց վերաբերող պարտավորությունների միջև: Բացի այդ, փոփոխությունը պահանջում է բացահայտումներ կազմակերպության կողմից ապաճանաչված ակտիվների վերաբերյալ, որոնց նկատմամբ այն պահպանում է շարունակական մասնակցություն, որպեսզի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները կարողանան հասկանալ այդպիսի մասնակցության էությունը և դրա հետ կապված ռիսկերը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Տվյալ փոփոխությունն ազդեցություն չի ունեցել Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, գործունեության կամ բացահայտումների վրա:

3. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ղեկավարությունից պահանջում է կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունում ներկայացված հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների (այդ թվում պայմանական), ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի հասույթի, ծախսերի վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ՝ ապագա իրադարձությունների վերաբերյալ սպասումները, որոնք ենթադրվում է, որ հիմնավոր են այդ հանգամանքներում: Այնուամենայնիվ, տվյալ ենթադրությունների և գնահատականների անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի արդյունքների, որոնք կպահանջեն էական ճշգրտում ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքների նկատմամբ ապագա ժամանակաշրջաններում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման:

(հազար ՀՀ դրամ)

3. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (շարունակություն)

Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Խումբը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների կանխատեսվող օգտագործումը, բ) գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ ակնկալվող մաշվածությունը, գ) շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է իր ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող գումարն ակտիվի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշեր, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է:

Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է: Արժեզրկման հաշվառումը ներառում է հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, այլ ոչ ընթացիկ ակտիվների և ոչ իրացվելի պաշարների գծով պահուստը:

Պարտավորությունների և ծախսերի գծով պահուստները հիմնականում ներառում են հարկային պարտավորությունների և դատական գործերի գծով պահուստները: Խումբը ճանաչում է արժեզրկման գծով ծախսեր կամ կուտակում է այդ պահուստներ, երբ իր գնահատումները ցույց են տալիս, որ հնարավոր է, որ պարտավորությունները առաջացել են կամ ակտիվները չեն վերականգնվել և գումարը կարող է հիմնավոր կերպով գնահատվել: Դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստը հիմնված է յուրահատուկ հաճախորդների պարտքերի հավաքագրելիության գծով ղեկավարության գնահատման վրա: Եթե հիմնական հաճախորդների վարկունակության անկում է առկա կամ եթե փաստացի չվճարումները ավելին են, քան ղեկավարության գնահատականները, փաստացի դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այս գնահատականներից:

Եթե ղեկավարությունը հայտնաբերում է, որ անհատապես գնահատվող դեբիտորական պարտքերի գծով չկա արժեզրկման առկայության վերաբերյալ որևէ փաստ, ապա այդպիսի դեբիտորական պարտքը, անկախ գումարից, ներառվում է միևնույն վարկային ռիսկ ունեցող դեբիտորական պարտքերի խմբում և կատարվում է արժեզրկման խմբային գնահատում:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են նման վարկային ռիսկերի հայտանիշների հիման վրա: Այդ հայտանիշները կիրառվում են նման ակտիվների խմբերի դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատման ժամանակ՝ ցույց տալով դեբիտորի կարողությունը վճարելու բոլոր պարտավորությունները գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններին համապատասխան: Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարության փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի վնասի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողության:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Հանքաքարի պաշարներ

Հանքաքարի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Խմբի վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքաքարի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքերի և այլ հանքանցքերի հանքաքարի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ հանքայնացման ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքավայրի հետագա շահագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ հանքաքարի պաշարների՝ Խմբի գնահատումների վրա:

Խումբը կիրառում է վերը նշված գնահատումները հիմնական միջոցների արժեզրկումն ու օգտակար ծառայության ժամկետները գնահատելու համար: Պաշարների գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ հետագոտման և գնահատման հետ կապված ակտիվների հաշվեկշռային արժեքների, վերականգնման ծախսերի գծով պահուստների, ինչպես նաև հետաձգված հարկային ակտիվների և հաշվարկված մաշվածության ճանաչման վրա:

Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության պահանջներին համապատասխանությունը ենթակա է տարատեսակ մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Խմբի անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսգրքի մեկնաբանությունների և ցանկացած հայտնի Դատարանի կամ այդ հարցերի գծով պատասխանատու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ փաստացի ընդունվել են մինչև հաշվետու ամսաթիվը: Տուգանքների, տույժերի և հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պարտավորությունը կատարելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների թողարկումն ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Ցանկում ներառված են այն թողարկված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք Խմբի կարծիքով ազդեցություն կունենան տեղեկատվության բացահայտման, ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա, եթե կիրառվեն ապագայում: Խումբը պատրաստվում է ընդունել ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն: Ներկայումս Խումբը գնահատում է ներքոհիշյալ ստանդարտների կիրառման ազդեցությունը ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում՝ *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ներկայացում*

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունը փոխում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող հոդվածների խմբավորումը: Այն հոդվածները, որոնք կարող են ապագայում որևէ ժամանակի դրությամբ վերադասակարգվել (կամ «օգտագործվել») շահույթում կամ վնասում (օրինակ՝ ներդրման հեջավորումից զուտ օգուտը, օտարերկրյա գործունեության փոխարկման վերահաշվարկից տարբերությունները, դրամական միջոցների հոսքերի հեջավորման զուտ շարժը և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների զուտ օգուտները կամ վնասները) կներկայացվեն առանձին այն հոդվածներից, որոնք երբեք չեն վերադասակարգվի (օրինակ՝ սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտները կամ վնասները, ինչպես նաև հողատարածքի ու շենքերի վերագնահատումից օգուտները կամ վնասները): Փոփոխությունն ազդեցություն ունի միայն ներկայացման վրա և չի ազդում Խմբի ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

ՀՀՄՍ 27 «Առանձին ֆինանսական հաշվետվություններ» (վերանայված 2011 թվականին)

Նոր ՀՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 12-ի (տես ստորև) թողարկումների հետևանքով ՀՀՄՍ 27-ը սահմանափակվում է առանձին ֆինանսական հաշվետվություններում դուստր կազմակերպությունների, համատեղ վերահսկվող և ասոցիացված կազմակերպությունների հաշվառմամբ: Խումբը չի կազմում առանձին ֆինանսական հաշվետվություն: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1- ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

(հազար ՀՀ դրամ)

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՀՀՄՍ 28 «Ստացիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումներ» (վերանայված 2011 թվականին)

Նոր հՀՄՍ 11 «Համատեղ ձեռնարկումներ» ստանդարտի և հՀՄՍ 12 «Այլ կազմակերպություններում բաժնեմասի բացահայտում» ստանդարտի թողարկումների հետևանքով ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ստացիացված կազմակերպություններում» ստանդարտն անվանափոխվել է՝ ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ստացիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում» և արտացոլում է ստացիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների նկատմամբ բաժնեմասնակցության մեթոդի կիրառումը: Վերանայված ստանդարտն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

հՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ՝ դասակարգումը և չափումը»

հՀՄՍ 9-ի թողարկումն արտացոլում է ՀՀՄՍ 39 ստանդարտը փոխարինելու ուղղությամբ ՀՀՄՍ-ի աշխատանքների առաջին փուլը և կիրառվում է ՀՀՄՍ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման նկատմամբ: Ստանդարտը սկզբնապես ուժի մեջ էր մտնելու 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, սակայն հՀՄՍ 9 ստանդարտի «Պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվ և անցման բացահայտումներ» փոփոխությունները, որոնք հրատարակվել էին 2011թ. դեկտեմբերին, տեղափոխեցին պարտադիր կիրառման ամսաթիվը մինչև 2015թ. հունվարի 1-ը: Հետագա փուլերում ՀՀՄՍ-ն կանդրադառնա հեջավորման հաշվառմանը և ֆինանսական ակտիվների արժեզրկմանը: հՀՄՍ 9 ստանդարտի առաջին փուլի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, բայց չի ազդի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբը կհաշվարկի ազդեցությունն այլ փուլերի հետ միասին, երբ կթողարկվի բոլոր փուլերը ներառող ստանդարտը՝ վերջնական խմբագրությամբ:

հՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՀՀՄՍ 27 «Առանձին ֆինանսական հաշվետվություններ»

հՀՄՍ 10-ը փոխարինում է ՀՀՄՍ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտի այն մասը, որը վերաբերում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաշվառմանը: Այն նաև անդրադառնում է ՄՄԿ 12 «Համախմբում. հատուկ նշանակության կազմակերպություններ» մեկնաբանությունում բարձրացված խնդիրներին: հՀՄՍ 10-ը սահմանում է միասնական վերահսկողության մոդել, որը կիրառվում է բոլոր կազմակերպությունների նկատմամբ՝ ներառյալ հատուկ նշանակության կազմակերպությունները: Ի տարբերություն ՀՀՄՍ 27-ում ներկայացված պահանջների հՀՄՍ 10-ի կողմից ներկայացված փոփոխությունները դեկավարությունից կպահանջեն կիրառել էական դատողություններ՝ որոշելու, թե որ կազմակերպություններն են վերահսկվում և, որի հետևանքով, պահանջում են համախմբում մայր ընկերության կողմից: Նախնական վերլուծություններից ելնելով՝ կանխատեսվում է, որ հՀՄՍ 10 ստանդարտը ոչ մի ազդեցություն չի ունենա Խմբի ներկայումս ունեցած ներդրումների վրա: Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

հՀՄՍ 11 «Համատեղ գործունեության համաձայնություններ»

հՀՄՍ 11-ը փոխարինում է ՀՀՄՍ 31 «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» ստանդարտը և ՄՄԿ 13 «Համատեղ վերահսկվող կազմակերպություններ՝ ձեռնարկողների ոչ դրամային ներդրումներ» մեկնաբանությունը: հՀՄՍ 11-ը բացառում է համատեղ վերահսկվող կազմակերպությունները համամասնական համախմբելու տարբերակը: Փոխարենը համատեղ ձեռնարկման սահմանմանը բավարարող համատեղ վերահսկվող կազմակերպությունները պետք է հաշվառվեն բաժնեմասնակցության մեթոդով: Ստանդարտը ոչ մի ազդեցություն չի ունենա Խմբի վրա:

հՀՄՍ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում»

հՀՄՍ 12-ը ներառում է ՀՀՄՍ 27-ում ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված բոլոր բացահայտումները, ինչպես նաև ՀՀՄՍ 31 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում նախկինում ներառված բացահայտումները: Այս բացահայտումները վերաբերում են կազմակերպության մասնակցությանը դուստր կազմակերպություններում, համատեղ գործունեության համաձայնություններում, ստացիացված և կառուցվածքային կազմակերպություններում: Ստանդարտը ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա: Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

(հազար ՀՀ դրամ)

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»

ՖՀՄՍ 13-ը սահմանում է ՖՀՄՍ-ների շրջանակներում բոլոր իրական արժեքների չափման մեկ միասնական ուղեցույց: ՖՀՄՍ 13-ը չի փոխում, թե երբ է կազմակերպությունից պահանջվում կիրառել իրական արժեք, սակայն տրամադրում է ուղեցույց, թե ինչպես չափել իրական արժեքը ՖՀՄՍ-ների շրջանակներում, երբ իրական արժեքի կիրառումը պարտադիր է կամ թույլատրելի: Խումբը ներկայումս գնահատում է այս ստանդարտի ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Սակայն նախնական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքի վրա: Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Տարեկան բարեփոխումներ (Մայիս 2012)

Տվյալ բարեփոխումներն ազդեցություն չեն ունենա Խմբի վրա, սակայն ներառում են՝

ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»

Տվյալ բարեփոխումը պարզաբանում է, որ կազմակերպությունը, որը նախկինում դադարել էր կիրառել ՖՀՄՍ-ներ և որոշում է, կամ նրանից պահանջվում է, դրանք նորից կիրառել, կարող է ընտրել ՖՀՄՍ 1 ստանդարտի կրկնակի կիրառման տարբերակը: Եթե ՖՀՄՍ 1 ստանդարտը նորից չի կիրառվում, կազմակերպությունը պարտադիր պետք է հետընթաց վերահաշվարկի իր ֆինանսական հաշվետվություններն այնպես, ասես այն երբեք չէր դադարել ՖՀՄՍ-ներ կիրառել:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

Տվյալ բարեփոխումը պարզաբանում է տարբերությունը կամավոր կերպով ներկայացված լրացուցիչ համեմատական տեղեկատվության և նվազագույն պահանջվող համեմատական տեղեկատվության միջև: Ընդհանրապես, նվազագույն պահանջվող համեմատական ժամանակաշրջանը նախորդ ժամանակաշրջանն է:

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»

Տվյալ բարեփոխումը պարզաբանում է, որ խոշոր պահեստամասերը և սպասարկման սարքավորումները, որոնք համապատասխանում են հիմնական միջոցների սահմանմանը, պաշարներ չեն:

ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»

Տվյալ բարեփոխումը պարզաբանում է, որ բաժնետերերին կատարված բաշխումներից առաջացած հարկերը հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 12 ստանդարտի:

ՀՀՄՍ 34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»

Փոփոխությունը միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում սեզոնային ընդամենը ակտիվների բացահայտման պահանջները համապատասխանեցնում ընդամենը պարտավորությունների բացահայտման պահանջներին: Այս պարզաբանումը նաև ապահովում է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների համապատասխանությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներին:

Սույն բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

5. Հասույթ

	2012թ.	2011թ.
Հասույթ սև պղնձի վաճառքից	43,054,368	42,533,758
Հասույթ մատուցված ծառայություններից	225,133	116,594
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	74,174	70,784
	43,353,675	42,721,136

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 1,671 չոր մետրիկ տոննա սև պղնձի (2011թ.՝ 1,996 չոր մետրիկ տոննա) պայմանականորեն գնանշված վաճառք, որը ներառում էր 30,240 (2011թ.՝ 232,818) իրական արժեքով պարունակվող ածանցյալ գործիք: Արդյունքում առաջացող պարունակվող գործիքը ճանաչվում է հասույթում:

Սև պղնձի վաճառքին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկայում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

(հազար ՀՀ դրամ)

6. Վաճառքի ինքնարժեք

	2012թ.	2011թ.
Պղնձի խտանյութ	32,374,343	33,319,945
Գազ	1,260,609	1,237,074
Աշխատավարձ	800,025	697,482
Նյութեր	337,710	394,986
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն	196,600	110,954
Սպասարկում և վերանորոգում	99,629	213,399
	35,068,916	35,973,840

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբն ուներ 13,984 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութի (2011թ-ին՝ 7,520 չոր մետրիկ տոննա) պայմանականորեն գնանշված գնում, որը ներառում էր 90,093 (2011թ.՝ 161,472) իրական արժեքով պարունակվող ածանցյալ գործիք: Արդյունքում առաջացող պարունակվող գործիքը ճանաչվում է վաճառքի ինքնարժեքում:

Պղնձի խտանյութի գնմանը վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկայում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

7. Այլ եկամուտներ

	2012թ.	2011թ.
Գույքագրումից ավելցուկ	77,532	59,063
Պաշարների վաճառքից եկամուտներ	73,915	10,588
Գործառնական վարձակալությունից եկամուտ	3,244	7,173
Զուտ շահույթ հիմնական միջոցների վաճառքից	-	281,378
Արտարժույթի փոխարկումից զուտ շահույթ	-	15,323
Այլ	17,701	37,406
	172,392	410,931

8. Վարչական ծախսեր

	2012թ.	2011թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	439,312	375,110
Սպասարկում և վերանորոգում	147,533	131,767
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն	133,130	47,044
Հարկեր, բացի շահութահարկից	119,429	93,534
Բնապահպանական վճարներ	112,238	349,142
Աուդիտ և խորհրդատվական ծառայություններ	80,916	58,138
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	73,723	73,136
Կոմունալ ծառայություններ և կապի գծով ծախսեր	68,552	58,694
Կառավարչական ծախսումներ	47,100	36,950
Բանկային ծախսեր	20,330	7,111
Այլ	99,493	84,216
	1,341,756	1,314,842

(հազար ՀՀ դրամ)

9. Այլ ծախսեր

	2012թ.	2011թ.
Դերիտորական պարտքերի գծով պահուստ	61,500	–
Հիմնական միջոցների օտարում	48,989	–
Վարձակալության ծախսեր	33,674	3,562
Վճարներ արհմիությանը	31,112	20,385
Պահպանման ծախսեր	30,682	31,003
Ֆինանսական օժանդակություն	27,032	30,050
Տույժեր և տուգանքներ	20,610	8,173
Գովազդ	19,890	14,607
Երկրաբանական հետազոտություններ	8,590	4,220
Մպասարկում և վերանորոգում	8,165	6,378
Արտարժույթի փոխարկումից վնասներ	4,335	–
Պաշարների դուրսգրում	–	12,358
Այլ	19,878	33,417
	314,457	164,153

10. Ֆինանսական ծախսեր

	2012թ.	2011թ.
Տոկոսային ծախսեր	432,983	200,286
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	602,904	673,875
	1,035,887	874,161

11. Հարկում

Շահութահարկը բաղկացած է հետևյալ տարրերից`

	2012թ.	2011թ.
Ընթացիկ շահութահարկ		
Ընթացիկ շահութահարկի գծով ընթացիկ վճարումներ	1,271,629	1,099,579
Հետաձգված հարկ		
Ժամանակավոր տարբերությունների առաջացմանը և հակադարձմանը վերաբերող	5,819	(257,366)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախսեր	1,277,448	842,213
	2012թ.	2011թ.
Շահույթ նախքան շահութահարկը	5,488,066	4,518,415
Հայաստանի Հանրապետության շահութահարկի պարտադիր 20% (2011թ.՝ 20%) դրույքաչափով հաշվարկված շահութահարկ	1,097,613	903,683
Արտարժույթային գործարքների գծով ծախսեր	120,581	134,775
Արտարժույթային կանխավճարների վերահաշվարկ հարկային հաշվառման մեջ	48,848	(107,852)
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գումարի փոփոխություն	–	(115,155)
Չհարկվող եկամուտ	10,406	26,762
Շահութահարկի արդյունավետ դրույքաչափով հաշվարկված	1,277,448	842,213
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախսեր	1,277,448	842,213

(հազար ՀՀ դրամ)

11. Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը վերաբերում է հետևյալ հոդվածներին.

	<i>2011թ. հունվարի 1</i>	<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվու- թյունում ճանաչված</i>	<i>2011թ. դեկտեմբերի 31</i>	<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվու- թյունում ճանաչված</i>	<i>2012թ. դեկտեմբերի 31</i>
Ոչ նյութական ակտիվներ	-	14,000	14,000	(14,000)	-
Հանքարդյունաբերական գույք	4,256	-	4,256	-	4,256
Կանխավճարված ֆինանսական ծախսեր	-	208,483	208,483	(48,848)	159,635
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7,836	(1,050)	6,786	(6,786)	-
Պաշարներ	62,104	(62,104)	-	-	-
Կրեդիտորական պարտքեր և պահուստներ	128,573	(256,476)	(127,903)	294,262	166,359
Վարկեր և փոխառություններ	-	-	-	70,503	70,503
Կուտակված հարկային վնասներ՝ փոխանցված հաջորդ ժամանակաշրջան	-	29,001	29,001	70,992	99,993
Հարկային ակտիվներ	202,769	(68,146)	134,623	366,123	500,746
Հիմնական միջոցներ	60,210	113,460	173,670	(218,095)	(44,425)
Դեբիտորական պարտքեր	(132,483)	212,052	79,569	(153,847)	(74,278)
Հարկային պարտավորություններ	(72,273)	325,512	253,239	(371,942)	(118,703)
Զուտ հարկային ակտիվ	130,496	257,366	387,862	(5,819)	382,043

Խումբը հաշվանցում է հարկային պարտավորությունները և ակտիվները միայն այն դեպքում, երբ այն ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցելու, և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են միևնույն հարկային մարմինների կողմից հավաքագրվող շահութահարկին:

12. Հանքարդյունաբերական գույք

	<i>Ավալերդու հանքավայր</i>	<i>Թեղուտի հանքավայր</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք			
2011թ. հունվարի 1-դրությամբ	1,469,861	3,053,288	4,523,149
Ավելացում	-	1,042,031	1,042,031
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,469,861	4,095,319	5,565,180
Ավելացում	-	7,251,806	7,251,806
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,469,861	11,347,125	12,816,986
Մաշվածություն			
2011թ. հունվարի 1-դրությամբ	1,469,861	-	1,469,861
Տարվա ծախս	-	-	-
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,469,861	-	1,469,861
Տարվա ծախս	-	-	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,469,861	-	1,469,861
Հաշվեկշռային արժեք			
2011թ. հունվարի 1-դրությամբ	-	3,053,288	3,053,288
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	4,095,319	4,095,319
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	11,347,125	11,347,125

(հազար ՀՀ դրամ)

13. Հիմնական միջոցներ

	<i>Մեքենաներ և Տրանսպորտային միջոցներ</i>			<i>Անավարտ շինարարություն</i>	<i>Այլ</i>	<i>Ընդամենը</i>
	<i>Հողատարածք և շենքեր</i>	<i>սարքավորումներ</i>	<i>տային միջոցներ</i>			
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	8,169,496	9,144,905	527,201	8,581,356	733,901	27,156,859
Ավելացում	1,529,286	645,509	20,137	12,979,782	200,028	15,374,742
Օտարում	(459,463)	(50,369)	(3,183)	(9,821)	(3,933)	(526,769)
Փոխանցումներ	7,915	354,700	–	(368,401)	5,786	–
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,247,234	10,094,745	544,155	21,182,916	935,782	42,004,832
Ավելացում	1,685,504	21,003,995	397,230	10,849,218	119,395	34,055,342
Օտարում	(81,665)	(85,611)	(9,792)	–	(2,404)	(179,472)
Փոխանցումներ	18,275	43,559	6,383	(18,275)	(49,942)	–
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,869,348	31,056,688	937,976	32,013,859	1,002,831	75,880,702
<i>Մաշվածություն</i>						
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	6,305,603	6,415,912	297,894	141,683	475,412	13,636,504
Տարվա ծախս	94,674	577,954	35,716	–	94,110	802,454
Օտարում	(399,044)	(27,707)	(2,065)	–	(3,172)	(431,988)
Փոխանցումներ	–	(5,534)	–	–	5,534	–
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,001,233	6,960,625	331,545	141,683	571,884	14,006,970
Տարվա ծախս	140,664	1,705,991	40,794	–	57,778	1,945,227
Օտարում	(14,821)	(26,174)	(3,327)	–	(1,004)	(45,326)
Փոխանցումներ	–	1,512	–	–	(1,512)	–
Արժեզրկում	(60,860)	(13,683)	–	–	(326)	(74,869)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,066,216	8,628,271	369,012	141,683	626,820	15,832,002
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	1,863,893	2,728,993	229,307	8,439,673	258,489	13,520,355
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,246,001	3,134,120	212,610	21,041,233	363,898	27,997,862
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,803,132	22,428,417	568,964	31,872,176	376,011	60,048,700

2012 թվականին Խմբի կողմից փոխառությունների գծով 2,011,472 գումարի չափով կրած բոլոր ծախսերը ներառվել են հիմնական միջոցների ավելացումների կազմում (2011թ.՝ 2,214,552): 1,640,692 գումարով մաշվածության ծախսերը կապիտալացվել են հիմնական միջոցներին 2012 թվականին (2011թ.՝ 629,750):

Խումբը գրավադրել է 3,753,006 հաշվեկշռային արժեքով հողատարածքը և շենքերը, ինչպես նաև 12,143,450 հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները, որպես վարկային գծի ապահովման միջոց (Ծանոթագրություն 19)

14. Պաշարներ

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Հումք և պահեստամասեր	5,201,503	2,059,669
Պատրաստի արտադրանք	1,191,530	658,102
Անավարտ արտադրություն	80,775	130,629
Այլ պաշարներ	368,638	523,349
	6,842,446	3,371,749

(հազար ՀՀ դրամ)

15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Փոխհատուցման ենթակա ներմուծման ընթացիկ ԱԱՀ	2,684,865	1,401,030
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,138,015	1,330,618
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	68,853	-
Այլ դեբիտորական պարտքեր	21,265	774,321
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի շրջանակներում ֆինանսական ակտիվներ	3,912,998	3,505,969
Կանխավճարներ	740,445	2,272,698
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,653,443	5,778,667

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերի կազմում հաշվառվում է արտասահմանյան հաճախորդից դեբիտորական պարտքը 1,168 չափով, (2011թ.՝ 1,720): Մնացած դեբիտորական պարտքերը ներկայացված են դրամով:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խուսթն ուներ պայմանականորեն գնանշված վաճառք, որը ներառում էր 30,240 (2011թ.՝ 232,818) իրական արժեքով պարունակվող ածանցյալ գործիք: Արդյունքում առաջացող պարունակվող գործիքը ճանաչվում է հասույթում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը ունեն 30 օր ժամկետայնություն:

	<i>Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստ</i>
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հաշվեգրված	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	61,500
	61,500

16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Դրամական միջոցներ դրամարկղում	1,017	974
Դրամական միջոցներ բանկերում	1,901,819	757,970
Դրամական միջոցներ ճանապարհին	1,406,316	-
	3,309,152	758,944

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են՝

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ընթացիկ հաշիվներ բանկում և դրամարկղում (ԱՄՆ դոլար)	3,152,235	19,487
Ընթացիկ հաշիվներ բանկում (ՀՀ դրամ)	135,809	735,628
Ընթացիկ հաշիվներ բանկում (եվրո)	13,585	2,932
Ընթացիկ հաշիվներ բանկում (ռուսական ռուբլի)	7,523	897
	3,309,152	758,944

17. Կանխավճարված ֆինանսական ծախսեր

Որպես Դուստր ընկերության և «ՎՏԲ Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքված 283,300 հազար ԱՄՆ դոլար գումարով վարկային գծի պայմանագրի մաս (Ծանոթագրություն 19)՝ Ընկերությունը պարտավորված էր Դուստր ընկերության «Teghout Investments Limited» (Ծանոթագրություն 1) բաժնետոմսերի 49.95%-ը փոխանցել է «ՎՏԲ» Խմբին, որոնցից 25.05%-ը «Teghout Investments Limited»-ի գուտ ակտիվներից ստացվող օգուտների համամասնական մասնաբաժին ստանալու իրավունք են տլախ:

(հազար ՀՀ դրամ)

17. Կանխավճարված ֆինանսական ծախսեր (շարունակություն)

Խումբը դուստր ընկերության գուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի 25.05%-ը, ճանաչվել է որպես չվերահսկող բաժնեմաս 4,004,309 չափով (2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,924,840), և այդ 25.05% մասնաբաժնի բաժնետոմսերի իրական արժեքը՝ որպես կանխավճարված ֆինանսական ծախսեր 3,049,021 չափով 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 2012թ. ընթացքում Դուստր ընկերությունը ստացել է վարկի մի մասը՝ 137,460 հազար ԱՄՆ դոլար չափով, և Խումբը համաչափորեն պակասեցրել կանխավճարված ֆինանսական ծախսերը և վարկի պարտավորությունը՝ 1,494,020 չափով:

Խումբը կատարել է չվերահսկող բաժնեմասի իրական արժեքի գնահատում: գնահատումը չի իրականացվել դիտարկելի գործարքների գների հետ համեմատության միջոցով՝ շուկայում բաժնետոմսերով կատարվող գործառնությունների սահմանափակ քանակով պայմանավորված: Փոխարենը Խումբը կիրառում է դրամական միջոցների գեղջված հոսքերի մոդելը, եթե որոշ ելակետային տվյալներ դիտարկելի չեն:

Թեև Խումբը գտնում է, որ իրական արժեքի իր գնահատականը տեղին է, տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել իրական արժեքի տարբեր չափումների: Մեկ կամ ավելի ենթադրությունների փոխարինումը հնարավոր այլընտրանքային ենթադրություններով կարող է ունենալ հետևյալ հետևանքները.

**Ազդեցությունը կանխավճարված
կատարված ֆինանսական ծախսերի
վրա**

	<i>ԱՃ</i>	<i>Նվազում</i>
Տոկոսադրույքի 2% փոփոխություն	(1,857,007)	2,257,816
Պղնձի գնահատված գների 10% փոփոխություն	3,151,111	(2,855,928)

Հնարավոր այլընտրանքային ենթադրությունների կիրառման դրական և բացասական հետևանքները հաշվարկվել են մոդելի արժեքների վերահաշվարկի միջոցով: Մոդելում կիրառված առանցքային ելակետային տվյալները և ենթադրությունները ներառում են հետևյալը.

- ▶ Խումբը ծրագրում է արդյունահանել 162.8 միլիոն տոննա հանքաքար, արտադրել 402,874 հազար չոր մետրիկ տոննա պղինձ և 9,807 հազար չոր մետրիկ տոննա մոլիբդեն 2014-2037թթ. ընթացքում՝ հիմք ընդունելով հանքաքարի պաշարների վերջին գնահատումները:
- ▶ Ըստ կանխատեսումների (աղբյուրը՝ Economist Intelligence Unit, World Commodity Forecasts: Industrial Raw Materials, December 2011) մեկ տոննա պղնձի գինը 2012թ. 8,929 ԱՄՆ դոլարից կաճի 9,039 ԱՄՆ դոլարի մինչև 2014թ.: Մինչև 2014թ. պղնձի գները գնահատելու համար կիրառվել է 2% սղաճի միջին դրույք:
- ▶ Ակնկալվում է, որ արտադրական ծախսերը աճելու են մինչև 2016թ., այնուհետև աստիճանաբար նվազելու են մակաբացման ծավալների նվազմանը զուգահեռ: Արտադրական ծախսերը գնահատելու համար կիրառվել է 2% սղաճի միջին դրույք:
- ▶ 18.5% գեղջի դրույքը կիրառվել է՝ հիմք ընդունելով «Թեդուտ» ՓԲԸ-ին վերաբերող ռիսկերի ղեկավարության գնահատականը:
- ▶ Կիրառվել են փոքրամասնության և ոչ իրացվելիության գեղջեր համապատասխանաբար 27.8% և 13.8% չափով:
- ▶ 2012-2013թթ. ընթացքում կանխատեսվել են 229 միլիոն ԱՄՆ դոլար գումարով կապիտալ ծախսումներ, որոնք հետագայում կփոխարինվեն տարեկան մաշվածության 25%-ին համարժեք ծախսումներով՝ հաշվի առնելով սղաճի միջին դրույքը:

18. Կանոնադրական կապիտալ և պահուստներ

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակ, եթե այլ տեղեկատվություն նշված չէ

	Սովորական բաժնետոմսեր	
	2012թ.	2011թ.
Հայտարարված բաժնետոմսեր	5,000,000	5,000,000
Անվանական արժեք, դրամ	1,000	1,000
Շրջանառության մեջ հունվարի 1-ի դրությամբ	3,069,716	3,069,716
Շրջանառության մեջ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ամբողջովին վճարված	3,069,716	3,069,716

(հազար ՀՀ դրամ)

18. Կանոնադրական կապիտալ և պահուստներ (շարունակություն)

Սովորական բաժնետոմսեր

Բոլոր բաժնետոմսերը տալիս են հավասար իրավունքներ Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս-մեկ ձայն սկզբունքով: Խմբի բոլոր սովորական բաժնետոմսերը գրավադրված են վարկային գծերի դիմաց (Ծանոթագրություն 19):

Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի՝ տեղական օրենսդրությամբ պահանջվող ՖՀՄՍ համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

19. Վարկեր և փոխառություններ

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկ	65,413,150	9,561,515
	65,413,150	9,561,515
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկ	4,052,818	3,800,581
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	6,214,929	23,803,661
	10,267,747	27,604,242

Ապահովված վարկ «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի կողմից

283,300 հազ. ԱՄՆ դոլար (114,334,214) սահմանաչափով վարկային գծի բացման ընդհանուր պայմանագիրը ստորագրվել է 2011թ. նոյեմբերի 22-ին: Ներկայումս վարկային գիծը բաղկացած է 3 ենթավարկային գծերից՝ #201, 202 և 203: Համաձայն պայմանագրի 201 և 203 վարկային գծերի համար որպես տոկոսադրույք կարող է կիրառվել 11% կամ LIBOR USD 3m + 6,02% տոկոսադրույքներից առավելագույնը, իսկ 202 վարկային գծի համար՝ 13% կամ LIBOR USD 3m + 8,02%:

ՎՏԲ Բանկից ստացված վարկն ապահովված է դուստր Ընկերության 100% բաժնետոմսերի, Ընկերության 100% բաժնետոմսերի և երաշխիքների, «Քեյ-Էս-Էմ-Էյ» ընկերությանը պատկանող «Վալեքս Ֆ.Ս. Էսթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 99.999% բաժնեմասի գրավով: Բացի այդ գրավադրված են վերոնշյալ ընկերությունների շարժական և անշարժ գույքը:

Վարկի հիմնական գումարի և տոկոսների մարումները կիրականացվեն սկսած 2015 թվականից:

	<i>Արժույթ</i>	<i>Տոկոսադրույք</i>	<i>Մարման տարի</i>	<i>Մարման</i>	
				<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Ապահովված վարկ 1	ԱՄՆ դոլար	11%/13%	2023	55,368,733	-
		1 ամիս			
Ապահովված վարկ 2	ԱՄՆ դոլար	LIBOR+6.5%	2016	10,051,938	9,568,795
				65,420,671	9,568,795
Ընթացիկ պարտավորություններ					
Գրավով չապահովված փոխառություն					
կապակցված կողմից	ՀՀ դրամ	9%	-	6,214,929	23,803,661
Ապահովված վարկ 3	ԱՄՆ դոլար	10%	-	4,045,297	3,793,301
				10,260,226	27,596,962

(հազար ՀՀ դրամ)

20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Առևտրային կրեդիտորական պարտքեր	590,691	734,884
Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	71,346
Այլ կրեդիտորական պարտքեր	379,983	300,251
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում ընդգրկված ֆինանսական պարտավորություններ	970,674	1,106,481
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով, բացի շահութահարկից	184,137	140,040
Ստացված կանխավճարներ	44,285	296,569
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,199,096	1,543,090

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ պայմանականորեն գնանշված գնում, որը ներառում էր 90,093 (2011թ.՝ 161,472) իրական արժեքով պարունակվող ածանցյալ գործիք: Արդյունքում առաջացող պարունակվող գործիքը ճանաչվում է վաճառքի ինքնարժեքում:

Կրեդիտորական պարտքերի կազմում հաշվառվում է արտարժույթով ներկայացված կրեդիտորական պարտքը՝ 898 չափով, իսկ 2011 թվականին՝ 929: Մնացած կրեդիտորական պարտքերը ներկայացված են դրամով:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերն ունեն 60 օր ժամկետայնություն:

21. Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ

2008թ.-ին Խումբը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցրել է անտառապատման ծրագիր, որը պետք է փոխհատուցի հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքների և գործարանի կառուցման նպատակով անտառահատումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասը: Հաշվետու ամսաթվի դրությամբ իր պարտավորությունը գնահատելիս Խումբը դիտարկել է հատված ծառերի ընդհանուր տարածքը, հատված ծառերի մակերեսի և անտառապատման ենթակա՝ համապատասխան ծրագրով սահմանված տարածքների հարաբերակցությունը, աշխատանքների համաձայնեցված ժամկետները և մոտավոր ծախսերը: Անտառապատման ենթակա տարածքի միավորի հաշվով աշխատանքների արժեքը գնահատելիս Խումբը դիտարկել է անտառապատման համար կնքված պայմանագրերի փաստացի գները:

	<i>Պահուստ</i>
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	33,738
Հաշվեգրված	88,792
Օգտագործված	(33,107)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,423
Հաշվեգրված	107,758
Օգտագործված	(76,390)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	120,791

Վերոնշյալ պահուստից բացի Խումբը ձևավորել է մակաբացման աշխատանքներից հետո հողերի վերականգնման գծով պահուստ 228,488 գումարի չափով 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Տվյալ պահուստը ձևավորվել է «Թեդուտ» ՓԲԸ կողմից հանքավայրի շահագործման ժամկետի վերջում շրջակա միջավայրի վերականգնողական ծրագրերի համար պահանջվող միջոցառումների արժեքային գնահատման արդյունքում: Որպես հողերի վերականգնման հիմնական տարբերակ նախատեսված է շահագործման ժամկետի վերջում հիմնական արտադրական տարածքների (դատարկ ապարների լցակայանի և պոչամբարի) վնասագերծում՝ հողածածկման միջոցով, ինչպես նաև այլ արտադրական տարածքների վնասագերծում հնարավոր թունավոր թափոններից: Այդ նպատակով ներկայումս իրականացվում է բացահանքի և լեռնահարստացուցիչ կոմբինատի տարածքում առկա սևահողի պահեստավորում և պահպանում, իսկ հետագայում՝ դրա օգտագործում՝ պոչամբարի և լցակայանի տարածքի մակերեսը մինչև 15 սմ հզորությամբ հողաշերտով ծածկելու համար: Համապատասխանաբար, Խմբի կողմից հողերի վերականգնման միջոցառումների արժեքային գնահատման աշխատանքը կատարվել է ելնելով հիմնական արտադրական տարածքների (լցակայանի և պոչամբարի) համար հողաշերտով ծածկման համար անհրաժեշտ աշխատանքների արժեքային գնահատումից:

(հազար ՀՀ դրամ)

21. Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստ (շարունակություն)

Հողածածկման համար պահանջվող աշխատանքները ներառում են հինգ ուղղություն՝

- ▶ Հողի պահեստավորում և խոտածածկում՝ հողի էրոզիան կանխելու համար,
- ▶ Պահեստից հողը հողածածկման տարածք տեղափոխելու համար նախապատրաստման աշխատանքներ (բարձրման նախապատրաստում և բարձում),
- ▶ Հողի տեղափոխման աշխատանքներ (հողի տեղափոխման հեռավորությունը նախատեսվում է միջինը 3 կմ),
- ▶ Հողածածկման տարածքի հարթեցում,
- ▶ Տարածքի կանաչապատում:

Նշված ուղղություններով աշխատանքները արժևորվելու նպատակով Խումբն օգտագործել է նույն կամ համանման դեպքերում Խմբի փաստացի ծախսերի վերաբերյալ առկա տվյալները: Վերոնշյալ գնահատականներով, Թեղուտի հանքավայրի շահագործման ժամկետի ավարտին նախատեսվող հողերի վերականգնման ծախսերը կկազմեն մոտ 700 մլն դրամ: Հողերի վերականգնման ծախսերի գծով պահուստը ստացվել է հիմնվելով վերոնշյալ գնահատման վրա, օգտագործելով 5% գնաճի դրույք և զեղչման ոչ ռիսկային տոկոսադրույք (16.35%): Աշխատանքները կիրականացվեն 2022-2026 թվականներին:

22. Կապակցված կողմեր

«Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24 ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելու ընթացքում: Կողմերի կապակցվածությունը որոշելիս հաշվի է առնվում կողմերի փոխհարաբերությունների բնույթը, այլ ոչ միայն դրանց իրավական ձևը:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չէին իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև: Կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի գործարքների գներից և պայմաններից:

Մայր ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններն իրենցից ներկայացնում են մայր ընկերության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները:

Կապակցված կողմերի մնացորդները տարեվերջի դրությամբ, ինչպես նաև ժամանակաշրջանի գործարքների արդյունքների համապատասխան գումարները ներկայացվում են ստորև.

Այլ եկամուտներ և այլ դեբիտորական պարտքեր

	<i>Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար</i>		<i>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	
	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ				
Այլ եկամուտներ	211,680	74,865	210,975	63,657

(հազար ՀՀ դրամ)

22. Կապակցված կողմեր (շարունակություն)**Գնումներ և այլ կրեդիտորական պարտքեր**

	<i>Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար</i>		<i>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	
	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ				
Հիմնական միջոցների ձեռքբերում	970,410	72,563	(35,773)	(1,414,142)
Պաշարների ձեռքբերում	11,041,209	17,715,028	432,095	(685,521)
Ծառայությունների ձեռքբերում և գործառնական վարձակալություն	509,000	249,778	18,440	10,667

Կապակցված կողմերի հետ բոլոր գործարքների մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

Փոխառություններ, տոկոսային եկամուտ և ծախսեր

	<i>Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար</i>		<i>Դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը</i>	
	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ				
Ստացված փոխառություններ	200,000	20,391,170	6,214,929	23,803,661
Տոկոսային եկամուտ	3,066	2,771	–	–
Տրված փոխառություններ	–	5,800	62,665	59,599
Տոկոսային ծախսեր	1,176,689	1,436,271	–	–

Վաճառք և կրեդիտորական պարտքեր

	<i>Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար</i>		<i>Դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը</i>	
	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ				
Հիմնական միջոցների վաճառք	–	641,180	–	768,937
Պաշարների վաճառք	82,933	102,005	–	(296,037)
Մատուցված ծառայություններ	51,144	56,020	983	831

Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցում

2012թ. ընթացքում առանցքային կառավարչական անձնակազմի ստացած հատուցումը կազմել է 54,616 (2011թ.՝ 45,270):

(հազար ՀՀ դրամ)

23. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու կարգավորման հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը հիմնականում կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Խմբի ղեկավարությունը հավատում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Խմբի կայունության ապահովման համար:

Դատական հայցեր

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը հանդիսանում է դատական հայցերի և պահանջների օբյեկտ: Ղեկավարության համոզմամբ, հնարավոր վերջնական պարտավորությունները, որոնք ծագում են նման հայցերի և պահանջների արդյունքում, էական բացասական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական դրության կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Ապահովագրություն

Թեև Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում, Խումբը քայլեր է ձեռնարկել հիմնական միջոցների ապահովագրման ուղղությամբ: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէր, գոյություն ուներ ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող էր զգալի բացասական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

2012 թ.-ի ընթացքում Խումբը ապահովագրել է իր հիմնական միջոցները 121,696,980 ընդհանուր գումարով:

Շրջակա միջավայրի պահպանություն

Շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը մշակման փուլում է Հայաստանում, և պետական մարմինների իրավասությունները շարունակաբար վերանայվում են: Խումբը պարբերաբար գնահատում է իր պարտականությունները՝ համաձայն բնապահպանության գործող կանոնակարգերի: Պարտականությունները որոշելուց հետո, դրանք անմիջապես ճանաչվում են: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ գործող կանոնակարգերի, քաղաքացիական գործերի գծով դատական վարույթների կամ օրենսդրության փոփոխության հետևանքով, հնարավոր չէ գնահատել, սակայն դրանք կարող են էական լինել: Ներկա օրենսդրական միջավայրում ղեկավարությունը գտնում է, որ Խումբը չունի էական չճանաչված պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված:

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձակալ

Խումբը վարձակալել է շենքեր և որոշակի մեքենա-սարքավորումներ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից: Այս վարձակալությունների տևողությունը տաս տարի է՝ երկարացման հնարավորությամբ, եթե չորոշվի վարձակալությունն ավարտել:

Այլ վարձակալության պայմանագրերը միջինում ունեն մեկ տարվա տևողություն՝ երկարացման հնարավորությամբ, կողմերի պայմանավորվածության հիման վրա: Այս վարձակալության պայմանագրերն Խմբի վրա որևիցե սահմանափակում չեն դնում:

(հազար ՀՀ դրամ)

23. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ (շարունակություն)

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձակալ (շարունակություն)

Չեղյալ չհամարվող գործառնական վարձակալության գծով ապագա նվազագույն վարձավճարները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	<u>2012թ.</u>	<u>2011թ.</u>
Մինչև մեկ տարի	73,322	73,322
Մեկ տարուց ավել, բայց ոչ ավել, քան հինգ տարի	142,837	143,197
Հինգ տարուց ավել	106,704	177,840
	<u>322,863</u>	<u>394,359</u>

Ներդրումային բնույթի պայմանական պարտավորություններ

Ներդրումային բնույթի պայմանական պարտավորությունները ներառում են հիմնական միջոցների ձեռքբերում, մետաղական կառուցվածքների շինարարություն և մոնտաժ, ջրագծերի շինարարություն, էլեկտրականության միացում և հարակից շինարարական աշխատանքներ: Շինարարական պայմանագրերը հիմնականում կնքվել են 2012 թվականին՝ միջինում մեկ տարի տևողությամբ: Հիմնական միջոցների գնման պայմանագրերը երկարաժամկետ են:

Ներդրումային բնույթի պայմանական մինիմալ ապագա պարտավորությունները 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 22,113,485 և 32,206,465:

Մետաղական կառուցվածքների շինարարական մի շարք պայմանագրերի գծով հիմնական պարտավորությունից բացի Խումբը պետք է վճարի նաև կառուցվածքների մաքրման համար: Տվյալ գումարը կհաշվարկվի աշխատանքների իրականացումից հետո 1 քմ համար 610 դրամ (ներառյալ ԱԱՀ) գնով: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի պարտավորությունների գումարը կազմել է 18,467:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունները հանդիսանում են տարբերակներ և հաճախակի իրականացվող բարեփոխումների առարկա: Խմբի գործունեության ընթացքում կիրառված այդ օրենսդրությունների գծով ղեկավարության մեկնաբանությունները կարող են վիճարկվել համապատասխան պետական մարմինների կողմից: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատականների գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնք նախկինում հարկային մարմինները չէին վիճարկել: Որպես այդպիսին, էական լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ կարող են հաշվարկվել: Ստուգմանը նախորդող երեք օրացուցային տարիների հարկային հաշվառումը կարող է ենթարկվել ստուգման: Որոշ դեպքերում ստուգումները կարող են իրականացվել ավելի երկար ժամանակահատվածի համար:

Ղեկավարությունը գտնում է, որ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատշաճ կերպով է կիրառում համապատասխան օրենքները, և Խմբի հարկային, արժույթային և մաքսային հարցերի գծով դիրքորոշումը ՀՀ պետական մարմինների կողմից կընդունվի:

24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Այդ ֆինանսական պարտավորությունների հիմնական նպատակն է Խմբի գործունեության ֆինանսավորումը: Խումբը ենթակա է շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերին:

Խմբի ղեկավարությունն իրականացնում է տվյալ ռիսկերի կառավարման վերահսկողություն: Այդ ռիսկերի կառավարման սկզբունքներն ամփոփված են ստորև:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական գները ներառում են ռիսկի 3 տեսակ՝ ապրանքների գների և այլ գների փոփոխության ռիսկ, տոկոսադրույքի փոփոխության ռիսկ, արտարժույթային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, վաճառքի համար մատչելի ներդրումները և ածանցյալ ֆինանսական գործիքները:

(հազար ՀՀ դրամ)

24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ապրանքների գների փոփոխության ռիսկ

Խումբը ենթարկվում է իր կողմից արտադրվող օգտակար հանածոների գործող շուկայական գների փոփոխականության ռիսկին: Խմբի քաղաքականությունն է կառավարել տվյալ ռիսկերը հաճախորդների հետ պայմանագրի վրա հիմնված գների և ապրանքային ածանցյալ պայմանագրերի օգտագործման միջոցով:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ապրանքների գների փոփոխությամբ պայմանավորված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքների տատանումների ազդեցությունը նախքան հարկումը շահույթի վրա: Սեփական կապիտալի վրա ազդեցությունը նույնն է, ինչ նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը, քանի որ տվյալ ածանցյալ ֆինանսական գործիքները չեն նախատեսվել որպես հեջավորման միջոցներ և դասակարգվել են որպես առևտրական նպատակներով պահվող, ինչի հետևանքով դրանք գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով:

Վերլուծությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ ոսկու և պղնձի գները փոխվել են 10%-ով՝ բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պայմաններում: Ապրանքների գների ողջամտորեն հնարավոր փոփոխությունները որոշվել են վերջին երկու տարվա պատմական արժեքների վերանայմամբ և տնտեսական վերլուծաբանների կանխատեսումների հիման վրա:

	<i>Գների ավելացում/ (նվազում)</i>	<i>2012թ. դեկտեմբերի 31- ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն. Ավելացում/ (նվազում)</i>	<i>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն. Ավելացում/ (նվազում)</i>
Հասույթ	10%	3,024	23,282
	(10%)	(3,024)	(23,282)
Վաճառքի ինքնարժեք	10%	9,909	16,147
	(10%)	(9,909)	(16,147)

Ապրանքների փաստացի առաքման պայմանագրեր

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում կնքում է նաև ապրանքների փաստացի առաքման պայմանագրեր: Այս պայմանագրերը ածանցյալ պայմանագրեր չեն և չափվում են սկզբնական արժեքով (բացառությամբ՝ գնանշվող ժամանակահատվածի դրույթներով պայմանագրերի, որոնք հանգեցնում են պարունակվող ածանցյալ գործիքի ճանաչմանը):

(հազար ՀՀ դրամ)

24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը (շարունակություն)

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին հիմնականում ենթարկվում են Խմբի դրամական միջոցները:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի՝ նախքան հարկումը շահույթի զգայունությունը արտարժույթի փոխարժեքների հնարավոր փոփոխության նկատմամբ (դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխությունների պատճառով, այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում)՝

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ զգայունություն

<i>Արժույթ</i>	<i>Փոխարժեքի աճ (%) 2012թ.</i>	<i>Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն 2012թ.</i>	<i>Փոխարժեքի նվազում (%) 2012թ.</i>	<i>Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն 2012թ.</i>
ԱՄՆ դոլար	5.49%	(2,727,247)	-5.49%	2,727,247
Եվրո	12.31%	(15,043)	-12.31%	15,043
Ռուսական ռուբլի	11.42%	14,339	-11.42%	(14,339)

<i>Արժույթ</i>	<i>Փոխարժեքի աճ (%) 2011թ.</i>	<i>Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն 2011թ.</i>	<i>Փոխարժեքի նվազում (%) 2011թ.</i>	<i>Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն 2011թ.</i>
ԱՄՆ դոլար	2.88%	(322,774)	-2.88%	322,774

Տոկոսադրույքների փոփոխության զգայունության վերլուծություն

Վարկերի և փոխառությունների գծով տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին ենթարկվում են Խմբի լողացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունները: Խումբը կառավարում է իր տոկոսադրույքի ռիսկը լողացող և ֆիքսված տոկոսադրույքով վարկերի և փոխառությունների պորտֆելի հավասարակշռությունը պահելու միջոցով:

Խումբը ենթարկվում է փոխառությունների և վարկերի տոկոսադրույքների փոփոխության ռիսկի: Խումբը միջոցներ է ներգրավում ինչպես ֆիքսված, այնպես էլ լողացող տոկոսադրույքով:

Ստորև բերված աղյուսակում ամփոփված են Խմբի չմարված տոկոսային վարկերն ու փոխառությունները՝

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտավորություն	10,260,226	27,596,962
Լողացող տոկոսադրույքով պարտավորություն	65,420,671	9,568,795
	75,680,897	37,165,757

Լողացող տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ դրամական հոսքերի զգայունության վերլուծություն

Ներկայացված տարիների ռիսկի ենթարկվածության վերլուծությունից ելնելով՝ լողացող տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունները հաշվետու ամսաթվի դրությամբ կհանգեցնեն մինչև հարկումը շահույթի փոփոխության աղյուսակում նշված գումարների չափով: Տվյալ վերլուծությունը ենթադրում է, որ այլ փոփոխականները, հատկապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

(հազար ՀՀ դրամ)

24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը (շարունակություն)

	ԱՄՆ	2012թ.		2011թ.	
		Նախքան հարկումը		Նախքան հարկումը	
		Տոկոսադրույքի փոփոխություն	շահույթի վրա ազդեցություն	Տոկոսադրույքի փոփոխություն	շահույթի վրա ազդեցություն
		բազիսային միավորներ		բազիսային միավորներ	
Պարտավորություններ դրվարով					
LIBOR դրույքի նվազում		(2)	(13,559)	(15)	(11,582)
LIBOR դրույքի աճ		2	13,559	15	11,582

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից՝ ֆինանսական գործիքի կամ հաճախորդի հետ կնքած պայմանագրի գծով պարտականությունները չկատարելու հետևանքով ֆինանսական վնասներ կրելու ռիսկը: Խումբը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում պայմանավորված առևտրային դեբիտորական պարտքերի առկայությամբ) և ֆինանսական գործունեության հետ, ներառյալ ավանդներ բանկերում և ֆինանսական կառույցներում, արտարժույթով և այլ ֆինանսական գործիքներով գործարքներ:

Ֆինանսական գործիքներ և դրամական ներդրումներ

Կանխիկ դրամական միջոցների ավելցուկները ներդրվում են ֆինանսական հաստատություններում, որոնք ներդրման պահի դրությամբ ունեն դեֆոլտի մինիմալ ռիսկ:

Իրացվելիության ռիսկ

Խումբն իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի վերահսկողություն՝ ընթացիկ իրացվելիության պլանավորման միջոցով:

Համաձայն պայմանագրային պայմանների չզեղչված վճարումների, կրեդիտորական և այլ պարտավորությունների մարման ժամկետը 2012 և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու ամսից պակաս է:

2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի	Մինչև 1 տարի					Ընդամենը
	Ցայահանջ	1-ից 2 տարի	2-ից 5 տարի	5 տարուց ավել		
Տոկոսային վարկեր և փոխառություններ	6,214,929	6,006,029	4,282,575	21,438,630	122,460,070	160,402,233
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված պարտավորություններ	727,257	557,524	–	–	–	1,284,781
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի		Մինչև 1 տարի	1-ից 2 տարի	2-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Տոկոսային վարկեր և փոխառություններ	23,803,661	7,418,346	5,481,007	20,664,984	62,439,116	119,807,114
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված պարտավորություններ	429,756	474,257	–	–	–	904,013

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Խմբի ֆինանսական գործիքների իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

(հազար ՀՀ դրամ)

24. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը (շարունակություն)

Սեփական կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոխվել: Խմբի նկատմամբ չեն գործում կապիտալի կառավարմանը վերաբերող արտաքին պահանջներ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Խմբի պարտքի և կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

	<u>2012թ.</u>	<u>2011թ.</u>
Ընդամենը պարտավորություններ	80,721,316	41,003,448
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	3,309,152	758,944
Զուտ պարտավորություններ	<u>77,412,164</u>	<u>40,244,504</u>
Ընդամենը սեփական կապիտալ	<u>23,953,301</u>	<u>19,736,617</u>
Պարտավորության և կապիտալի հարաբերակցությունը ղեկսեմբերի 31-ի դրությամբ	3.23	2.04

25. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

«ՎՏԲ Բանկ» ԲԲԸ հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում (Ծանոթագրություն 19) Դուստր ընկերությունը 2013թ-ին ստացել է ֆինանսավորում 33,144,957 գումարի չափով: